



Հայոց ցեղասպանութիւնը



Տեղասպանութիւն երեւոյթի բնորոշումը

Պրոֆեսոր Ի.Ա. Արաբեան

Գլուխ 2

Հայոց ցեղասպանութիւնը Արեւմտեան Հայաստանում սկսել է շատ անելի վաղ, մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը: Սկիզբ է առել դեռեւս 19-րդ դարի վերջերից, երբ սուլթան Աբդուլ Համիդը 1890-ական թականներին սրի քաշեց 300 հազար հայ, իսկ 1909 թ. Կիլիկիայի Ադանա քաղաքում հայ բնակչութեան զոհերի թիւը հասաւ 30000-ի, արեւելեան ու թալանեցին բազմաթիւ գիւղեր եւ արաններ: Դրանք Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ կիրառուող ցեղասպանութեան առաջին քայլերըն էին: Գտնելով թուրքական բռնապետութեան լծի տակ, Արեւմտեան Հայաստանը ենթարկել է դաժան ճնշումների եւ կեղեքումների, որոնք ունեցել են այլանդակ, անօրայի եւ դաժան ձեւեր ու եղանակներ:

Այսպէս, օրինակ, 1876 թ. դիմելով Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ 4-ին, արեւմտահայերը գրում էին. «Ձօր ու գիշեր, միշտ եւ հանապազ տագնապի մէջ ենք, դաժանօրէն տառապում ենք գաւառական պաշտօնեաների, հարկահաններին, կառավարիչներին եւ այլ բռնատրների ձեռքին, ընդհուպ մինչեւ այն, որ նրանք անպատու են մեր եկեղեցական հովիին, մեր կանանց համեստութիւնը, մեր աղջիկների պատիւը, հեղում են մեր երիտասարդների եւ ծերերի արիւնը, անարգում մեր տաճարի ու ծեսերի սրբութիւնը¹»

Արեւմտեան Հայաստանում թուրք օսմանեան ջարդարները 1890-ական թականներին արեւել են 2600 հայկական գիւղ ու քաղաք, կործանել են եկեղեցի եւ վանք, բռնութեամբ մահմեդականացրել են 559 գիւղերի շուրջ 100000 բնակիչների, 328 հայկական եկեղեցի վերածել է մզկիթի, 546000 կին, երեխայ, ծերունի կորեցրել են կերակրողներին եւ մնացել առանց խնամակալների:

1910թ. հոկտեմբերի 31-ին Սալոնիկում գումարեց իթթիհաթականների նոր համագումարը, ուր ընդունեցին գաղտնի որոշումներ, որոնք հիմք հանդիսացան թուրքական կառավարութեան ցեղասպանութեան քաղաքականութեան իրականացման համար: Գլխատր նշանաբանը «Թուրքիան միայն թուրքերի համար» կարգախօսան էր, որն էլ հանդիսացաւ ցեղասպանութեան սկզբունք: Արեւմտահայութեան համապարփակ ողբերգութիւնը գործնականում իրականացուեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երիտասարդ թուրքերի ձեռքով: Երիտթուրքերի պարագլուխներն ու չարանեւզ ազգային գործիչները 1915 թ. փետրարին գումարեցին գաղտնի խորհրդակցութիւն, որտեղ յատկապէս քնն-

նարկեց հայերի բնաջնջման հարցը: Ներքին գործերի նախարար Թալէաթը իր հեռագրերից մէկում պատւիրում էր. «Ձեզ արդէն հաղորդել է, որ Ջեմիէթի (երիտասարդ թուրքերի ղեկավար կոմիտէ) ցուցման համաձայն որոշում է լիովին ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին: Նրանք, ովքեր հանդէս են գալիս այդ որոշման դէմ, չեն կարող մնալ իրենց պաշտօններում: Որքան էլ դաժան լինեն ձեռնարկած միջոցառումները, այնուամենայնիւ պէտք է վերջ տալ հայերի գոյութեանը: Ուշադրութիւն միք դարձրէք ոչ տարիքին, ոչ սեռին, ոչ խղճի խայթին²»:

Հայերին ջարդելու պայմանով, ներման կարգով բանտերից ազատ արձակեցին յանցագործներ: Կազմելով ասպակախմբեր, զօրքի, ոստիկանութեան հետ համատեղ, նրանք զագանացած սկսեցին բնաջնջել հայերին, որի համար կային նպաստատր պայմաններ: Սօստեմում էր առաջին համաշխարհային պատերազմը, թուրքերի հայաջինջ քաղաքականութիւնն անելի էր հասունանում: Թալէաթի հրաւիրած չարաբաստիկ խորհրդակցութիւնում դուկտոր Կազիմը նշել է. «Պէտք է գործել եւ գործել արագ: Եթէ բաւարարենք միայն մասնակի կոտորածով, ինչպէս 1909թ. Ադանայում եւ ուրիշ շրջաններում էր, ապա դա օգուտի փոխարէն վնաս կը բերի, քանի որ ռիսկ կանենք արթնացնել նաեւ այլ տարրերի՝ արաբներին ու քրդերին, որոնց նույնպէս պարտաւորում ենք անելի ճանապարհից, վտանգը կը մեծանայ եռակի չափով կը դժարանայ մեր մտադրութեան իրագործումը:

... Հայ ժողովուրդը պէտք է հիմքից ոչնչացնել՝ այնպէս, որ ոչ մի հայ մեր հողի վրայ չմնայ, եւ ամուսն իսկ մոռացիլ»: Այնուհետեւ նա շարունակել է. «Այժմ պատերազմ է, այսպիսի յարմար ժամանակ այլեւս չի լինելու: Մեծ տէրութիւնների միջամտութիւնը եւ համաշխարհային մատուլի աղմկալից բողոքները անկկատ կը մնան, իսկ եթէ յայտնի դառնան, ապա նրանք կը կանգնեն արդէն կատարած փաստի առաջ, եւ դրանով էլ արդէն հարցը կը սպառուի: Այս անգամ մեր գործունեութիւնը պէտք է ըստանայ հայերի համընդհանուր բնաջնջման բնոյթ, անհրաժեշտ է բնաջնջել բոլորին, մինչեւ վերջինը³»: Նազըմը շեշտել է, որ պատերազմի ընթացքում հայերի համակրթաբնք ռուսները կողմն է, եւ հե՛նց այդ փաստը բաւական է՝ նրանց տեղահան անելու ու ոչնչացնելու համար: Նոյն մտքերը բազմիցս քարոզել է Թալէաթը՝ բերելով ռուսական մամուլից քաղածքներ, որպէս «ապացոյց» հայե-


¹ Հայերի ցեղասպանութիւնը օսմանեան կայսրութիւնում, 1991, էջ 4:

² Տես «Հայերի ցեղասպանութիւնը օսմանեան կայսրութիւնում». փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու Մ. Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1991, էջ 12:

³ Զօրավար Անդրանիկի «Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւր...», էջ 4. կամ Ծ.Պ. Աղայեան. «Հայ ժողովրդի ազատագրական պատմութիւնից», 1976, էջ 458-459:

³ Մելիքան Զադէ Բոճաթ. «Օսմանեան յեղափոխութեան մտք ծայրեր», էջ 149-160:

Տեղասպանություն



րի դաւադրական գործունեութեան, պահանջելով վերացնել հայ տարրը⁴:

Երիտասարդ թուրքերի կուսակցական կոմիտէն եւ մահմեդական մեծ վեզիրը, 1915 թականի ապրիլին՝ հայկական կոտորածները սկսելու նախօրեակին, օսմանեան բանակի զինւորներին եւ Կովկասի մահմեդականներին արած կոչում յիշատակում են, որ հարիւր հազարաւոր ասկեարներ արդէն

անցել են սահմանը, մտել Կովկաս, որպէսզի ազատագրեն մահմեդականներին, հաւաստիացնելով, որ «Հայերը եւ ռուսները մահմեդականների հաւատի եւ արեան թշնամիներն են», ուստի անհրաժեշտ է նրանց դէմ յայտարարել «սրբազան պատերազմ», որ «նրանցից պէտք է մաքրուել», յանուն որի իրենց արիւնն են թափում «Մուհամեդի զաւակները»⁵: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ այսպէս կազմակերպւեց ու կոնկրետացւեց օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութիւնը արեւմտահայութեան զանգուածային կոտորածը կայգերական Գերմանիայի աջակցութեամբ եւ արեւմուտեան տերութիւնների թողութեամբ:

1915թ. ապրիլի 15-ին Թալէթի, Էնիերի ու Նազըմի ստորագրութեամբ տեղական իշխանութիւններին՝ ուղարկեց համատարած բռնագողթի ու ջարդերի կազմակերպման հրահանգը: Չօրահաւաքի պատրուակով 60 հազար հայ զօրակոչւեց եւ ոչնչացւեց, կառավարութիւնը դրան զուգընթաց գլխատեց հայ ժողովրդի ղեկավար ուժը՝ մտաւորականութեանը, նա խօսքը հաստատած սեւ ցուցակի համաձայն, սահմանելով որոշակի օր՝ փակ ծրարը բացելու եւ ջարդը սկսելու համար: Դա 1915թ. ապրիլի 24-ն էր: Կ. Պոլսում եւ միւս քաղաքներում բանտարկւեցին եւ զազանաբար սպանւեցին հարիւրաւոր անամի հայ գործիչներ 196 գրող, 163 նկարիչ, 565 երաժիշտ-երգահաններ եւ կատարողական խմբերի մասնակիցներ, 336 բժիշկ, դեղագործ ատամնաբույժ, 176 ուսուցիչ ու քուլէջների պրոֆեսորներ, 160 իրաւաբան, 62 ճարտարապետ, 64 դերասան⁶: Նրանց թում էին ակնանւոր գրողներ, հրապարակախօսներ Գրիգոր Չոհրապը, Դանիէլ Վարուժանը, Միամանթօն, Ռուբէն Մեակը, Ռուբէն Չարդարեանը եւ ուրիշներ: Հայ մեծ կոմպոզիտոր Կոմիտասը պատահականութեան շնորհիւ ողջ մնաց, բայց զարհուրելի երեսփնների ազդեցութեան տակ հոգեկան խանգարում ստացաւ: Գրիգոր Չոհրապը, լինելով թուրքական մեջլիսի անդամ, ջանքեր չխնայեց հայերի վիճա-

կը թեթեւացնելու համար, իսկ եղեռնի նախօրեակին ու նրա իրագործման ժամանակ մերկացնում էր թուրք բարձրաստիճան պաշտօնեաների ցեղասպանութեան քաղաքականութիւնը:

Նա համարձակ ու ինքնավստահ կերպով ուղղակի մեղադրում էր կառավարութեանը եւ պահանջում պատժել թուրք ջարդարարներին: Հայ ժողովրդի բախտը եւ ապագան կապում էր Ռուսաստանի հետ մերկացնելով Թուրքիայի նկատմամբ գերմանական հովանաւորչական քաղաքականութիւնը: Գ. Չոհրապը իր կեանքը նւիրեց հայ դատի պաշտպանութեանը, լինելով տաղանդաւոր փաստաբան, մեծամարտ էր մղում թուրքական կամայականութիւնների դէմ՝ մինչեւ վերջ պատնէշ կանգնելով եւ մնալով բարձունքի վրայ, խիզախօրէն պայքարելով ցեղասպանութեան գլխատըր կազմակերպիչների դէմ: Նա 1915թ. մայիսի 19-ին եղաւ Թալէթի եւ իթքիհաքականների պարագլուխ Միրհատ Շիքրիի մօտ, ճակատ առ ճակատ խարազանող խօսքեր շարտեց, ասելով «Օր մը, ապահով եղէք, որ հաշիւ պիտի պահանջուի ձեզմէ եւ դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները»⁷: Թալէթ պէլը հեզմանքով հարցրել է. «Ո՞վ պիտի պահանջէ այդ հաշիւը: Ե՛ս,- բացականչել է Գ. Չոհրապը,- խորհրդարանի մէջ իբր հայ մեպուս (երեւիտխան), ձեզմէ հաշիւ պիտի պահանջեմ»: Դա լինում է Գ. Չոհրապի զայրոյթի վերջին ճիշդ: Կանխորոշեց նրա մահը, եւ զազանաբար նա էլ սպանւեց, իսկ նրան սպանող ոճրագործ չէրքեզ Ահմեդը մի թուրք պատմաբանի ասել է. «Չոհրապին ձեռքը անցուցի, ոտքիս տակը առի, խոշոր քարով մը գլուխը ճմլեցի, ճմլեցի, մինչեւ որ...»⁸:

Երիտասարդ թուրքերը հայ ազատագրական շարժման մի խումբ մասնակիցների նկատմամբ կազմակերպեցին 1915 թ. ապրիլի 28-ի դատավարութիւն՝ «յանուն օրէնքի եւ օրինականութեան» պատրուակով: Դատախազի ձեռքին էր Մատթէոս Մարգսեանի (ծածկանունը՝ Փարամազ) հայ ժողովրդի ազատագրական պայքարով շրջող վերջին յօդածը «Հայի պահնաջը», ուր նշում էին ընդհանուր ազատագրական ուղիները, եւ իշխող էր հայ ժողովրդի անկախութեան գաղափարը: Փարամազի հետ դատեցին միւս 20 ընկերները, որոնց դատավճռում ուղղակի ասած էր. «Դատավարութեամբ հաստատուած է, որ մեղադրեալները նպատակ են դրել պայքարել «անկախ եւ ինքնավար Հայաստանի» համար, ուստի դատապարտում են մահուան՝ կախաղանի միջոցով»⁹: Նման անարեւելի դատավճռից յետոյ, չբաւարարելով այդ բոլորով, Թալէթ փաշան 1915թ. սեպտեմբերի 15-ին հեռագրով հրահանգել է «Թուրքական հողի վրայ հայերի ապրելու եւ աշխատելու իրաւունքը լիովին վերացած է: Դրան համապատասխան, կառավարութիւնն իր վրայ է վերցնում ամբողջ պատասխանատւութիւնը եւ հրամայում է չխնայել նոյնիսկ օրօրոցի մանուկներին»¹⁰:■

Ճար. 2

⁴ Մեկան Չաղէ Բոճաթ. «Օսմանեան յեղափոխութեան մտք ծայրեր», էջ 149-160:

⁵ Տես Վրացական ՍՍՌ ԿՊԱ. Գ.63, գ. 2769, ք. 91-92:

⁶ Տես Մնացականեան Ա., «Հայ ժողովրդի ողբերգութիւնը ռուս եւ համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ», Երեւան, 1965. էջ 42:

⁷ Աղայեան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնը, Երեւան, 1976, էջ 478-479:

⁸ Նոյն տեղում:

⁹ «Արարատ» օրաթերթ. 17 յունիսի 1912:

¹⁰ Տես Սովետական Հայաստան, Հայկական Սովետական հանրագիտարան, Երեւան, 1987. էջ 154-155:

Իրանահայ Համայնք

Հագարատը քեհրանահայեր մասնակցեցին Ապրիլ 24-ի քայլարշախն.-Մոյն քականի ապրիլի 24-ին քեհրանահայերը մեծ բով մասնակ-



ցեցին Հայոց ցեղասպանութեանը նիւրած քայլարշախն: Սա մի իսկական համազգային հաւաք էր, որում կարելի էր հանդիպել քեհրանահայ բոլոր խաւերի, միութիւնների, դասամանցների ու նաեւ տարբեր տարիքի պատկանող հայորդիներին՝ ցեղասպանութեան վերապրողներ, մտաւորականներ, ազգային-հասարակական գործիչներ: Նորածին երեխաներից սկսած մինչեւ այս աշխարհին հրաժեշտ տալու «հերքում» կանգնած պետքներ:

Քայլարշախը սկսեց Ս. Մարգիս եկեղեցու մուտքի մօտից եւ աւարտեց «Դաւան մաղան» պողոտայի վերջում՝ ՄԱԿ-ի գրասենեակի առջեւ:

Քայլարշախի աւարտին ընթերցեց 10 կէտից բաղկացած ցեղասպանութիւնը դատապարտող մի բազմաբովանդակ բանաձեւ: Այնուհետեւ ելոյթ ունեցան Թեհրանի քեմի առաջնորդ Տ. Մեպոհ եպիս. Սարգսեանը եւ ԻԻ խորհրդարանում՝ հիւսիսային իրանահայութեան պատգամատուր դոկտ. Լեւոն Դարբեանը:

Մեծ Եղեռնին նիւրած ԻԱՄՄ-ի գեղարեստական ծրագիրը «Մուքերեան» սրահում.- 2001թ. ապրիլի 27-ին Թեհրանի «Իրանահայ, Ազգային, Մշակութային» միութիւնը Մաջիդիէի ազգային «Մուքերեան» սրահում մի գեղարեստական ծրագրով մեծարեց Հայոց ցեղասպանութեան բիւրատը նահատակների յիշատակը:

Երեկոյի բացումը կատարեց սոյն միութեան նախագահ Արմախր Մարգարեանը: Բացման խօսքից յետոյ

բեմ իրաւիւրեց օրայ բանախօս դոկտ. Անդրանիկ Միմոնեանը: Բանախօսը հակիրճ անդրադարձաւ նախքան 1915թ. եւ ապա նրանից յետոյ թուրքերի կողմից կազմակերպուած հայ ժողովրդի բնաջնջման երկարատեւ ծրագրին: Այնուհետեւ մէջբերումներ կատարեց հայ ժողովրդի կողմից ցուցաբերած հակազործութիւններից: Դոկտ. Միմոնեանը իր խօսքերը աւարտեց հետեւալ կարգախօսութեամբ.- «Պէտք է ընդմիշտ համախմբել հայրենի պետութեան շուրջ, քանզի միշտ էլ սխալներ կը լինեն, որոնք անպայման կը սրբազրուեն. կարելոյրը հայրենիքի հարատեւումն է:» Վերջում միութեան գեղարեստական բաժինը ներկայացրեց իր ճոխ եւ բարձրակ ծրագիրը, որը արժանացաւ ներկաների քաջալերանքներին:

Գեղարեստական ծրագրի ընդհանուր պատասխանատուն էր դոկտ. Արմինէ Ղազարեանը եւ ցեղասպանութիւնը բնորոշող պատկերների քատերակնացումը յանձնարարել էր իրանահայ հանրածանօթ քեմադրիչ Անդրանիկ Խեչումեանին:

Հանդիսութեանը ներկայ էին՝ Թեհրանի դեսպանութեան անձնակազմը, Իրանի Խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան պատգամատուր դոկտ. Լեւոն Դարբեանը եւ հայկական միութիւնների ներկայացուցիչ մամուլի պատասխանատու անձինք:

Հայոց ցեղասպանութեան առիթով մեծ հանրահաւաք Թեհրանի «Արարատ» մարզաւանում.- Թուականի 24 ապրիլի երկուրեան քեհրանահայութիւնը հաւաքել էր «Արարատ» մարզաւանում մէկ անգամ եւս իր արդարապահանջ ձայնը բարձրացնելու, իր ազգային տուրքը մատուցելու եւ 1.5 միլիոն անմեղ հայորդիների յիշատակը վառ պահելու նպատակով: Նրանք հաւաքել էին, Հայոց ցողասպանութիւնը պաշտօնապէս չճանաչող պետութիւններին յայտարարելու, որ իրենք եւս այսպիսով մասնակից են դառնում թուրքերի կողմից կատարուած ոճիրներին: Այնտեղ ժողովուրդը ակնանատեւ եղաւ մի ճոխ եւ բարձր անկարողակով ծրագրի,որի գերակշռող մարք յատկացւած էր գեղարեստական բաժնին:

Բացման խօսքից յետոյ, որպէս բանախօս ելոյթ ունեցաւ Հայաստանից

ժամանած ՀՀ Ազգային ժողովի անդամ Ռուբէն Յովսէփեանը:

Ելոյթ ունեցան նաեւ Թեհրանում ՀՀ դեսպան Գեղամ Ղարիբջանեանը, Թեհրանի քեմակալ առաջնորդ Տէր Մեպոհ եպիսկ. Սարգսեանը եւ Արմինէ Մարգարեանը:

Գեղարեստական բաժնում հանդես եկան Հայաստանից՝ հրաւիրուած ասումնքի եւ երաժշտական «Աստղ» համոյթը եւ Թեհրանի «Ձարթնոց» երգչախումբը: «Ձարթնոց» երգչախումբի խմբավարն է հանրածանօթ իրանահայ Էդիկ Թամրազեանը: Երկու խմբերի ելոյթներն էլ խիստ աղպարոյիչ էին:

Ծրագրի ընթացքում ցուցադրում էր Հայոց ցեղասպանութեանը առնչող տեսաժապաւեններ:

Տուտրոյի դահլիճային մրցոյթներ «ԲաՅՅի» մարզանշակութային համայնքում.-Մոյն քականի մայիսի 4-ին ներկայ եղանք վերոյիշեալ համայնքում դահլիճային Ֆուտբոլի եզրափակիչ մրցոյթին, որը նիւրած էր Հայաստանում Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակին:

Եզրափակիչ մրցոյթներում «Ալեքս» խումբը թէժ եւ անզիճում պայքարում յաղթելով «ԲաՅՅի» խմբին կանգնեց առաջին պատուաւոր պատանդանի վրայ: Երիտասարդական բաժնում «Մարդարապատ» խումբը յաղթելով իր ախոյեանին՝ 5.3 առաջին հանդիսացաւ: Երեցների մրցոյթում «Անի»խումբը յաղթելով «Արարատ»-ի երեցներին դարձաւ չեմպիոն:Հրաւիրած էին իրանահայ միութիւնները, հայ մամուլի ներկայացուցիչներ եւ իրանահայ հանրայայտ Ֆուտբոլիստներ:Վերջում իրանահայ նախկին ճանաչած եւ այժմ Ֆուտբոլին հրաժեշտ տուած Ֆուտբոլիստների ձեռքով ներքեր յանձնեցին լաւագոյններին :

Ապրիլի 26-30-ին Թեհրանում Ատեղի ունեցաւ Միջին Արևելքի Եկեղեցիների Խորհրդի Գործադիր Վարչութեան Ժողովը նախաձեռնութեամբ և հիւրընկալութեամբ Թեհրանի Հ.Թ-ի առաջնորդ Տ. Մեպոհ եպս. Սարգսեանի և Իրանի ԻՀ մշակոյթի և երկխօսութեան կազմակերպութեան :

Իրան

Այսօրվա Խամենեյի պահանջն ժողովրդի գիտակցաբար մասնակցել նախագահական ընտրու-



քիներին (Համշահի օր. 02.05.01).- ԻՒ Խամենեյի անունով առաջնորդ Այսօրվա Խամենեյին ելոյթ ունենալով «Ուաշ» քաղաքում, ժողովրդի պահանջն՝ գիտակցաբար մասնակցել նախագահական ընտրություններին: Երկրի առաջնորդը իր ելոյթի ընթացքում ասաց. «Քեկնածուների նկատմամբ ցեխարձակումները, զրպարտությունը, անհիմն բացայտությունները իսլամական կարգերում համարում են անարժեք, անիրաւացի եւ խիստ արգելւած են:

Իրանի 8-րդ նախագահական ընտրություններին մասնակցել են 200-ից ատելի թեկնածուներ.- Իրանի Ներքին գործերի նախարարութեան ընտրական շտաբի հաղորդման համաձայն անցեալ 6 շրջանի վիճակագրությունը հետեւեալն է.

Առաջին շրջանում մասնակցել են 124 թեկնածուներ, որոնցից 106-ն են մտել ընտրապայքարի մէջ: Երկրորդ շրջանում մասնակցել են 71 թեկնածուներ, որտեղ 4 թեկնածուների իրաւասութիւնն է հաստատուել: Երրորդ շրջանում մասնակցել են 46 թեկնածուներ, հաստատուել է 4- թեկնածուների իրաւասութիւնը, չորրորդ շրջանում մասնակցել են 50 թեկնածուներ, հաստատուել է 3 թեկնածուների իրաւասութիւնը, հինգերորդ շրջանում մասնակցել են 79 թեկնածուներ, հաստատուել է 2 թեկնածուների իրաւասութիւնը, վեցերորդ շրջանում մասնակցել են 128 թեկնածուներ, հաստատուել է 4 թեկնածուների իրաւասութիւնը, եօթերորդ շրջանում մասնակցել են 238 թեկնածուներ, եւ հաստատուել է 4 թեկնածուների իրաւասութիւնը:

Հայաստան

ԱԺ-ի բոլոր քաղաքական ուժերը ԼՂՀ-ի խնդրում միասնական դիրքորոշում ունեն (Արմէն-

պրես 27.04.01).- Աժ-ում ներկայացւած բոլոր քաղաքական ուժերը ԼՂՀ-ի հիմնախնդրի վերաբերեալ այսօր հանդէս եկան միասնական յայտարարութեամբ: Մինչ յայտարարութիւնը ներկայացնելը, խմբակցութիւնների եւ խմբերի ներկայացուցիչները նշեցին, որ փաստաթուղթը մըշակել է համատեղ աշխատանքի արդիւնքում: ԱԺ փոխնախագահ Տիգրան Թորոսեանի խօսքերով, յայտարարութիւնը քաղաքական կարելուք նշանակութիւն ունի, քանի որ խորհրդարանական ուժերը ԼՂՀ-ի հիմնախնդրի վերաբերեալ սկզբունքային հարցերի շուրջ ունեն միասնական դիրքորոշում: Յայտարարութիւնում մասնաւորապէս ասուում է, որ Արցախի հիմնահարցի արդարացի լուծումը տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների բնականոն զարգացմանը, հայկական պետականութեան հեռանկարին առնչուող ռազմավարական խնդիր է:

Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհատրական ուղերձը Յաղթանակի, ԼՂՀ պաշտպանութեան բանակի եւ Շուշի ազատագրման օրայ առիթով.- ԷՋՄԻԱԾԻՆ, 8 ՄԱՅԻՄԻ. ԱՐՄԷՆՊԵՏ:

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը շնորհատրական ուղերձ է հղել Մայիսի 9-ի Յաղթանակի, ԼՂՀ պաշտպանութեան բանակի եւ Շուշի ազատագրման օրայ առիթով. «Բերկրաշատ հոգով ողջունում, շնորհատրում եւ Հայրապետական մեր օրհնութիւնն ենք բերում հանուր մեր ժողովրդին՝ Յաղթանակի, ԼՂՀ պաշտպանութեան բանակի եւ Շուշի ազատագրման Օրայ տոնական առիթով: Արդարութեան ու ազատութեան Յաղթանակի բերկրանքով են համակված մեր բոլորի հոգիները, եւ մեր աղոթքը այսօր խաղաղութեան հայց է առ Աստուած: Միեւնիմք: Ազատութեան սերը եւ խաղաղութեան երազը ամենաթանկ արժէքներից են, որ ժառանգութիւն ենք ստացել մեր նախնիներից: Հայաստանի եւ Արցախի անկախութեան հռչակման 10-րդ տարում, երբ ազգս այսօր Հայոց Մեծ Դարձի 1700-ամեակի խորհրդով հոգեւոր նորոգութեան օրեր է ապրում, հրաւեր, յորդոր ու պատգամ ենք ուղղում մեր բարե-

պաշտ զաւակներին՝ վերստին լցել լաւատեսությամբ, հաւատատր հոգու մոր գորութեամբ եւ ութսունութեան միաբանութեան ոգով ծառայել ամենուր հայրենական մեր կեանքի վերաշինութեան ու Հայրենիքի վերածրննդի նւիրական առաքելութեանը:

Թող Բարձրեալն Աստուած օրհնի ստեղծագործ ջանքերը մեր ժողովրդի, անկողորում պահի ոգին ու բազուկը հայրենեաց պաշտպան մեր զաւակների՝ հանուն ազատ եւ անկախ Հայաստանի ու Արցախի խաղաղ, բարգաւառ ու բարօր կեանքի: Թող Տէրը խաղաղութիւն սփռի աշխարհին համայն եւ զօրացնի համերայրութիւնը պետութիւնների ու ժողովուրդների»:

Վարուժան Կարապետեան.

«Ես Հայաստանում եմ մնալու»

(Արմէնպրես ,03.05.01): «...Քրեական պատժով դատաւարուել է այնպիսի արարքների համար, որոնք ուղղւած են եղել թուրքական թիրախների դէմ», մասնաւորապէս նշւած է 1983 թ. Փարիզի Օռլիի օդանաւայանում կատարւած ահաբեկչութեանը մեղաակցութեան մեղադրանքով ցմահ ազատազրկման դատաւարուած Վ. Կարապետեանի ազատման մասին 2001 թ. մարտի 19-ին Բուժի վճռաբեկ դատարանի կայացրած վճռում: Վ. Կարապետեանի ազատման մասին վճիռը կայացել է Ֆրանսիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւի ընդունումից յետոյ, եւ նրան ազատութեան իրաւունք է տրել ապրիլի 23-ին Եղեռնի զոհերի յիշատակի օրայ նախօրեակին: «Ուրախ եմ, որ Ֆրանսիան հայ ժողովրդի ցեղասպանութիւնն ընդունելուց յետոյ կարողացաւ Չեզ շնորհել այդքան երկար սպասում պայմանական ազատութիւնը», մասնաւորապէս գրւած է բանտից ազատւելու կապակցությամբ Վ. Կարապետեանին հասցեագրւած՝ պատժի յանելման եւ ներման բանտային ծառայութեան խորհրդական Լը Կորդոնելի շնորհատրական նամակում. Վ. Կարապետեանի ազատութեան պայմանը նրա՝ Ֆրանսիայից Հայաստան տեղափոխուելն է: Երեւանի քաղաքապետը Վ. Կարապետեանին աշխատանքով եւ բնակարանով ապահովելու գրաւոր խոստում է

հղել, եւ այսօր Վ. Կարապետեանը մշտապէս հաստատուել է Երևանում:

ՀՀ վարչապետի հանդիպումը Լիբանանի նախագահի հետ (Արմէնայրես 03.05.01).- Մոյն քուկանի մայիսի 3-ին տեղի ունեցաւ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հանդիպումը երկօրեայ պետական այցով Հայաստան ժամանած Լիբանանի Հանրապետութեան նախագահ Էմիլ Լահուդի հետ: ՀՀ վարչապետը շնորհաւորել է Լիբանանի նախագահին իր երկրի հարաւից իսրայէլական զինած ուժերի դուրսբերման եւ այդպիսով երկրի այդ տարածքն ազատագրելու կապակցութեամբ: Նա շնորհակալութիւն է յայտնել Լիբանանին իր երկրորդ հայրենիքը դարձրած սփիւռքահայ համայնքի նրկատմամբ ցուցաբերող ջերմ եւ բարեացական վերաբերմունքի, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան դատապարտման հարցում այդ երկրի վճռական մտնեցման համար: Բարձր գնահատելով Հայաստանի եւ Լիբանանի միջեւ քաղաքական փոխգործակցութիւնը, ՀՀ վարչապետը այն նպաստատու եւ կարեւոր հիմք է համարել դեռեւս այդ մակարդակը չապահովող տնտեսական յարաբերութիւնների զարգացման համար: Լիբանանի նախագահը եւս կարեւորել է երկու երկրների միջեւ տնտեսական համագործակցութեան զարգացումը, նշելով, որ բարձր մակարդակի փոխայցելութիւններին զուգահեռ անհրաժեշտ է ակտիւացնել գործարարների շփումները: Նա խոստացել է վերադառնալուն պէս յանձնարարել արագացնել հայ-լիբանանեան միջկառավարական յանձնաժողովի լիբանանեան կազմի ձեւաւորման աշխատանքները եւ հետեւողական լինել տնտեսական յարաբերութիւնների աշխուժացման ու զարգացման հարցում: Հանդիպման արարտին Էմիլ Լահուդը ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանին պաշտօնապէս հրաւիրել է այցելել Լիբանան:

Լիբանանի նախագահն այցելեց Մայր Աթոռ Սբ Էջմիածին (Արմէնայրես 03.05.01).- Հայաստանում պետական այցով գտնող Լիբանանի Հանրապետութեան նախագահ գեներալ Էմիլ Լահուդը տիկնոջ եւ

ուղեկից շքախմբի հետ մայիսի 3-ին այցելեց Մայր Աթոռ Սբ Էջմիածին՝ հանդիպելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Նորին Սրբութիւնը ողջունել է պատարածան հիւրի այցը հայոց հոգեւոր կենտրոն, առանձնակի գոհունակութեամբ նշելով երկու ժողովուրդների դարատու բարեկամութիւնը: Ի հաստատումն ասածի, Լիբանանի նախագահը փաստել է, որ հայերը որպէս Լիբանանի լիարժէք քաղաքացիներ իրենց կարեւոր ներդրումն ունեն երկրի կեանքում: Հանդիպման ընթացքում խօսել է Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեայ յորելանական տօնակատարութիւնների մասին, Նորին Սրբութիւնը ներկայացրել է Հայ եկեղեցու գործունէութիւնը: «1700-ամեակը մեծ իրադարձութիւն է աշխարհում, եւ վստահ ենք, որ շատ լիբանանահայեր մասնակից կը լինեն այդ տօնախմբութիւններին», - ասել է գեներալ Էմիլ Լահուդը: Հայ եկեղեցու նշանակալի յորելանը մեծ շուքով կը տօնախմբուի նաեւ Լիբանանում Հանդիպման արարտին Վեհափառ Հայրապետը Լիբանանի նախագահին նիքել է Հայ եկեղեցու հոգեւոր գանձերը պատկերող շքեղազարդ այրում, ի պատասխան որի հնչել է նախագահի հայերէն «շնորհակալութիւնը»: «Չեմ կարող իմ ուրախութիւնը չարտայայտել, որ Լիբանանի առաջին տիկինը հայ ազգի զարակ է եւ Լիբանանի ազնի քաղաքացի», - ասել է Հայոց Հայրապետը:

Լիբանանի նախագահ Է.Լահուդի պետական այցը Հայաստան (Արմէնայրես 03.05.01). 2001թ. մայիսի 3-ին արարտեց Լիբանանի Հանրապետութեան նախագահ գեներալ Էմիլ Լահուդի գլխատարած պատիրակութեան պետական երկօրեայ այցը Հայաստան: Լիբանանի նախագահին ճանապարհելուց յետոյ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանը պատասխանեց «Չարքնոց» օդանաւկայան եկած լրագրողների հարցերին: ՀՀ նախագահն ասաց, որ պետական այցն այն դէպքն է, երբ վիճահարոյց հարցեր չեն լինում երկու երկրների միջեւ: Գնահատելով այցի արդիւնքները, Ռ.Քոչարեանը նշեց, որ Է.Լահուդի հետ կարծիքներ



են փոխանակել տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների, Լիբանանի հայ համայնքի եւ մի շարք այլ խնդիրների շուքը: Խօսելով տնտեսական համագործակցութեան զարգացման մասին, նա ասաց. «50-ից աւելի հայլիբանանեան համատեղ ձեռնարկութիւն կայ, եւ պէտք է ասեմ, որ դրանց մի զգալի մասը ստեղծել է վերջին մէկերկու տարուայ ընթացքում»:

Միջազգային

Ապրիլի 24-ին Փարիզում խոսարհեցին Ֆրանսիայի ու Հայաստանի դրօշները (Արմէնայրես 25.04.01).- Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելուց յետոյ Ֆրանսիան առաջին անգամ պետական բարձր մակարդակով նշեց Մեծ Եղեռնի զոհերի յիշատակը: Ապրիլի 24-ին, կէսօրից յետոյ Հայաստանի դեսպանութեան եւ Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի ներկայացուցիչները, բարձրդաստիճան զինուորականների ուղեկցութեամբ, այցելեցին Յաղթական Կամար եւ ծաղկեպսակ դրեցին Անյայտ Ձիմորի գերեզմանին՝ ի նշան յարգանքի 1915 թ. Ցեղասպանութեանը զոհ գնացած 1,5 մլն հայերի: Օրուայ երկրորդ կէսին փակել է Ծանգ Էլիզէ պողոտան. հազարատու հայեր եւ ֆրանսիացիներ դրօշներով եւ ծաղիկներով, հեռուստախցիկների ուղեկցութեամբ լուռ քայլել են դէպի Յաղթական կամար: Ելիւձեան պալատի զինուորական հրամանատարը, Մեմատի գլխատուր շտաբի պետը, ֆրանսիացի պաշտօնեաներ եւ պատգամատուրներ, տեղական իշխանութիւնների ներկայացուցիչներ, զինուորականներ, նախկին հայ ռազմիկներ եւ համայնքի կրօնական ու աշխարհական դեկավարներ լուռութեամբ յարգել են նահատակների յիշատակը, ստորագրել Պատուոյ մատեանի մէջ:

Հասարակական

Ցեղասպանության վերապրողների յուշերից

Բիթլիսացի Աստուսեան Թագուհու պատմածը (ծնւ. 1900 թ.)

Երբ տեղահանութիւնն սկսաւ, ես 15 տարեկան էի: Թուրքական կառավարութենէն հրաման եկած էր, որ այր մարդկանց հաւաքեն զինուորական, իսկ մնացածին աքսարին, յետոյ ջարդեն:



Մեծ հայրիկիս ու մեծ մօրեղբայրիս տարին թուրքի բանակ, որովհետեւ իրենց մէկ ազգականը կառավարական պաշտօնեայ էր: Ադր համար չձգեցին, որ մեզի հետ արտուին: Ես տունին միակ աղջիկն էի: Եղբայրներս՝ Յարութիւնը, Սիրեկանը, Գրիգորը, մեր տունին բանկարժէք առարկաները տունին տակը տարին, պահեցին: Ինչ որ պէտք էր, առինք հետերնիս: Չարիքները ասում էին.- Հայրէ՛, էրմենիկեր, արաքալարընայ բիւնիքիկեր (Դէ՛, հայեր, շտապէ՛ք, սայլերի մէջ լցեցէ՛ք):

Գառնիկ էՖեռնդիին ձեռքերը քելեփչէ դրին, տարին:

Մեզի Կոնիա տարին: Հոն թուրք մը եկաւ, պապայիս ըսաւ.-« Բըզընը բանա վերիք սեն, սիզի քաչըրըրըն» (աղջըկաղ եթէ ինձ տաս, ձեզ կը փախցնեն): Ե՛կ՛ պապաս, մէ՛ մամաս՝ չտի: Պապաս ճամփին մեռաւ, չորս կնիկ եկան, ձեռք ու ոտքէն բռնեցին, տարին փոս մը փորած էր, նետեցին մէջը, ես աղ տեսայ: Աղ փոսը ուրիշ շատ հիւանդներ ողջ-ողջ նետեցին, կամ սուրերը կը տնկէին, հայերուն, լո՛փ, վրան կը նետէին, որ մեռնին: Արիւնները ամէ՛ն կողմէն կը վազէին... մոռացելիք բա՞ն է: Կը յիշեմ, երկինքէն ալ չեքիրզէ կը տեղար: Մէկը՝ անութենէն չեքիրզէ կուտր, միսը՝ կովին արիւնը կուտր: Հօրաքոյրս սատկած կովին արիւնը թենեքէի մը մէջ եփեց, մենք կերանք: Ես՝ պիտի մեռնիմք, ես՝ պիտի ապրիմք: Չիերուն քալած տեղը չիշ, անձրեւ լցած էր, աղ ալ ջուրի պէս խմեցիմք, ի՞նչ ընենք՝ ծարաւ ենք: Ջուր կը փնտրենք, ջուր՝ չկայ: Ես եմ, իմ ետեւէս հօրաքոյրիս չջուլսները, բոլորս ալ ծարաւ ենք: Մամաս ու եղբայրս շատ ծանր հիւանդ էին, անոնց ճամփին ծառի մը տակ թողեցիմք, քանի որ այսօր-վաղը մեռնելիք էին: Իմ քովս անթիկա վագոյ մը կար բախըր, ան ալ թուրքերը գողցան, վրայիս ոսկիներուն հետ: Ետքը իրարանցումը սկսաւ. աղջիկ կը փախցնէին, շատերը կը փախչէին, որ չբռնեն: Ես մենակս մնացի մի տեղ ինկած, իբր մեռած եմ, բայց կը տեսնայի շատերը Եփրատ գետը նետեցան ողջ-ողջ, ես՝ չնետեցայ: Հոն ինկած էի. արեւը մայր մտնելու վրայ էր, սկսայ մտածել՝ զիշերը վրայ կուգայ, կը վախճան գայլերը ինձի պիտի ուտեն: Մէկէն ուժ մը եկաւ վրաս: Ելայ, սկսայ քալել: Հեռէն ուղտ մը տեսայ, խորհեցայ, թէ անպայման մարդ կայ այդ կողմերը: Նորէն քալեցի, մինչեւ մօտեցայ, մութը ինկաւ: Փոթորիկ մը եկաւ, փռշին պատեց ամէն տեղ :

Հագի տեսայ քով-քովի վրաններ, մեծ շունչ մը առի: Առաջին վրանին հասայ, շունչս կարում էր: Արաք կնիկ մը տեսայ: Ան ինձ օգնեց, կերակուր տուաւ, ներս տարաւ, ոջիւներս մաքրեց, ինձ լաց: Աղ բեղիկները անապատը կապրէին, ոչխար, ուղտ կը պահէին: Աղ կնիկը չջուլսներ ալ ուներ: Հոն ուրիշ հայ աղջիկներ ալ կային, կը յիշեմ

Ազնի Կրքաչեանին: Անոր անունը Մարիամ դրած էին, Մարիամ թաու կըսէին, թաու արաքերէն մեծ կը նշանակէ, իմ անունն ալ Մարիամ գուղայար, այսինքն՝ փոքր Մարիամ դրած էին: Հոն մենք իրար հետ հայերէն կը խօսէինք: Թուրքերուն ձեռքը չիյնալու համար բեղիկները մեր երեսները կանաչ մելանով դաջել էին: Բոլորս տասներկու հայ աղջիկ էինք: Հոն բացօթայ տեղ մը փաշա մը կար: Ամէն օր մէկ հատ աղջիկ կը տանէր իր քովը: Աղ փաշան հարեմի պէս բան մըն էր շինած:

Օր մը դուռին առջեւը նստած էի, մէկը ինձի ըսաւ. «Ես՛,բենթի՛,բենթի՛,(Ա՛յ, աղջի՛կ)քեզի ուղտի վրայ պիտի նստեցնեն, չիյնաս»: Ես ելայ, ուղտի վզին փաթթեցայ:

Աղ արաք մարդը ուզեց ինձ հետ ամուսնանալ: Ես ըսի.- Կամուսնանամ քեզի հետ, պայմանով, որ եղբորս գտնաս:

-Կը գտնան,- ըսաւ արաքը:

Աղ բեղիկներու քովը հաց եփել սորեցայ, ծառի չորցած փայտերէն կրակ կը վառէի եւ կրակին մօտ երկա՛ր ծամեր կը մնայի, բոլորին համար հաց կեփէի: Աղկէ է, որ աչքիս բիքը վնասած է, մինչեւ հիմա մէկ աչքով կը տեսնամ միայն:

Օր մըն ալ բեղիկներուն մօտ վաճառական մը եկաւ՝ այծեր, ոչխարներ առնելու, որ տանի Սուրիա, Մուսուլ...

Ես արդէն բեղին ամուսինու երկու տղայ ունեցած էի: Աղ բեղին ամուսինս ինձի շատ կը սիրէր, կը մեղքնար ալ: Օր մը ըսաւ.-Երկուր էրթանք Մուսուլ, հոն շատ հայեր կան: Մեր ծանօթ վաճառականն ալ հոն է, կարող է քո եղբորը գտնենք:

Մենք պատրաստեցանք, երկու զաւակով գացինք Մուսուլ: Տուն վարձեցինք: Աղ բեղին ամուսինս ինձի շատ կը սիրէր: Մուս չեմ կրնար խօսիլ, հոգի ունիմ տալու: Ինչ որ պէտք էր, ամուսինս կը բերէր շուկայէն, բայց հոն երկու զաւակներս ալ հիւանդացան, մեռան: Բեղին ամուսինս իրեն ծանօթ աղ վաճառականին միջոցով դիմեց հայկական եկեղեցիին, թերթերու միջոցով իմացանք, որ եղբայրս Եգիպտոսում է: Սկսեց դժուար վիճակ մը: Բեղին ամուսինս թէ՞ հայ, հարազատ եղբայրս: Կուլայի՛, կողբայի՛: Ամուսինս տեսաւ վիճակս, մեղքցաւ, ինձի ազատ թողեց: Միակս ճամփայ ելայ դէպի Սուրիա, յետոյ Լիբանան, անտեղէն ալ՝ Եգիպտոս, գտայ եղբորս: Ժամանակ մը յետոյ ամուսնացայ հայ Աղունիկ Արզերունեանի հետ, ունեցայ երկու զաւակ՝ Աբրահամին եւ Չարուհուն:

Եգիպտոսէն ալ եկանք հոս՝ Լոս Անջելես, աղջիկս՝ Չարուհին նկարչուի դարձաւ, տղաս՝ Աբրահամը, ոսկերչական Ֆարքիկայ ունի: Ես ալ հանգիստ կը վայելեմ իմ ծերութեանս օրերը... : ■

Նորամուտների գալուստը բարի



Միսէ Արթուսի
մայրը՝ Մարիգա
հայրը՝ Անթուան

Պատրիկ Ստրաբեան
մայրը՝ Այիդա
հայրը՝ Վազգէն

Ռոզրիկ Բաբախանեան
մայրը՝ Անի
հայրը՝ Արմոնդ

Ռոնիֆա Ղուրջեան
մայրը՝ Քրիստինէ
հայրը՝ Ռազմիկ


Սիոնիստների ծրագրերը մեր տարածաշրջանում

Արմեն Գրիգորյան
(Հայոց Աշխարհ 16.11.00)

Երբ փորձում ենք բացայայտել մեր տարածաշրջանում արտաքին ուժերից իրաքանչիւրի դերակատարութիւնը, ապա մի պահ մոռանում ենք, որ ԱՄՆ-ից, Միացեալ Եւրոպայից, Ռուսաստանից, Չինաստանից կամ մեր անմիջական հարեւաններից բացի կայ եւս մի երկիր, որը թէև գերտէրութիւն չէ, բայց ունի կայացած քաղաքական, ռազմական եւ հետախուզական համակարգ եւ շատ մօտ է Անդրկովկասին: Դա Իսրայէլն է, որն այսօր կրկին ներքաշուել է մերձաօրարեւելեան դժարին հակամարտութեան մէջ, որը արաբաիսրայէլական նախորդ պատերազմներից տարբերում է նրանով, որ այլեւս չեն լինելու յաղթողներ ու պարտուողներ:

Իսրայէլը կորցրել է Արեւմուտքի անփոխարինելի դաշնակցի առաւելութիւնների գերակշիռ մասը, իսկ արաբական երկրների մեծամասնութիւնն անդառնալիօրէն ինտեգրուել է արեւմտեան աշխարհին եւ ներկայումս Իսրայէլի դէմ գործում է արեւմտեան «տեխնոլոգիաներով»: Ֆինանսական հսկայական միջոցներ յատկացնելով մարտու-նակ ու լիովին լիւնայեմացած պաղեստինեան դիմադրական շարժմանը, արաբական երկրները վարում են Իսրայէլին դանդաղօրէն մաշելու եւ ուժասպառ անելու քաղաքականութիւն, քանի որ պաղեստինեան ահաբեկիչների տուած գոհերը անհամեմատելի են իսրայէլցիների մարդկային առումով թէև փոքրաթիւ, բայց Ֆինանսական ու քաղաքական առումով հսկայական կորուստների հետ: Իսրայէլը տեսնում է, որ ինքը ներքաշուել է աշխարհաքաղաքական մարտը հակամարտութեան ճահճի մէջ, ուստի գերմարդկային ճիգեր է գործադրում նրանից դուրս պրծնելու համար:

Այդ առումով նրա համար խիստ կարեւոր է Առաջաւոր Ասիայում հակամարտութեան մի նոր խոշոր օջախի առկայութիւնը՝ գերտէրութիւնների ուշադրութեան կենտրոնը այնտեղ տեղափոխելու, սեփական գործառնությունների մի մասը «Նոր Իսրայէլին» փոխանցելու եւ արաբների խիստ վտանգաւոր մարտավարութեանը դիմակայելու համար: Նոր աւետեաց երկրի եւ նրան անդրաժեշտ «Նոր Իսրայէլի» այս փնտրտուքը ամենեւին էլ նպատակ չունի Առաջաւոր Ասիայում ստեղծել հզօր մի դաշնակից, որը հարկ եղած դէպքում կաջակցի «հին» Իսրայէլին: Կարեւորը ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Իրանի ուշադրութիւնը Մերձաւոր արեւելքից շեղելու խնդիրն է, որի իրականացման համար ամենայարմար հաւանական



կոնֆլիկտի գօտին Անդրկովկասն է, ուր ներկայումս խառնաձեւում ու բախում են այդ երկրների շահերը:

Այս առումով Իսրայէլի համար լաւագոյն տարբերակը հայ-թուրքական հակամարտութեան բորբոքման խնդիրն է, որն արդէն մի անգամ՝ դարասկզբին նպաստել է Իսրայէլ պետութեան ձեւաւորման անհրաժեշտ նախադրեալների ստեղծման գործին: Թէև դրա հետեւանքով հայերը յայտնեցին փլուզած Օսմանեան կայսրութեան փլատակների տակ, բայց արդիւնքում ճանապարհ բացուեց արաբական աշխարհի վրայ Արեւմուտքի տիրապետութեան հաստատման, իսկ դրանից յետոյ՝ Իսրայէլ պետութեան կազմաւորման համար: Ներկայումս, երբ Արեւմուտքն ինքն է իրականացնում հայ-թուրքական հակամարտութեան լծակները կառավարելի դարձնելու եւ դրանով Անդրկովկասում ու Արեւելեան Թուրքիայում հաստատելու մարտավարութիւն, Իսրայէլը փորձում է իր շահերի համար օգտագործել Թուրքիայի դէմ սկիզբ առնող մեծ խաղը եւ այդ խաղի մէջ «Ներդնել» արաբա-իսրայէլական հակամարտութեան աշխարհաքաղաքական գործառնությունները:

Ուստի Արեւմուտքում եւ առաջին հերթին ԱՄՆ-ում գործող երեւական հզօր լոբբին փոխում է իր միակողմանիօրէն հայավմաս քաղաքականութիւնը եւ փորձում Արեւմուտքին որքան հնարաւոր է շահագրգռել Անդրկովկաս թափանցելու հեռանկարով՝ միաժամանակ ձգտելով անմիջական վտանգ ստեղծել նաեւ Իրանի համար: Անընդհատ ասպարէզում պահելով հայ-աղլրքեջանական տարածքային փոխանակումների եւ առաջին հերթին Մեղրու հիմնահարցը եւ դրա շուրջ ստեղծելով անառողջ քաղաքական եռուզեռ՝ սիոնիստական շրջանակները ձգտում են ստեղծել ԱՄՆ-ի եւ Իրանի շահերի բախման նոր հնարաւորութիւններ եւ դրանով իսկ խարխիւլ օբյեկտիւօրէն այդ շահերի որոշ մերձեցումն ապահովող արաբական դիմադրական շարժման յենարանները:

Եթէ Ռուսաստանի, Իրանի կամ Արեւմուտքի կողմից մեր տարածաշրջանում իրականացուող քաղաքականութեան մէջ կարելի է յստակօրէն տարբերակել մեր ազգային շահերի համար ձեռնուող կամ ոչ ձեռնուող բոլոր հիմնական քայլերն ու նրանց դրսեւորման առանձին երանգները, ապա այդ քայլերի բախումն ու կոլիզիան սրելու եւ տարածաշրջանը երկարատեւ հակամարտութեան գօտու վերածելու փորձերի մէջ նկատուում են ուրիշների ձեռքերով կրակից շագանակներ հանելու աւանդական սիոնիստական քաղաքականութեան դրսեւորումները:

Խիստ կարեւոր է, որ այդ վտանգաւոր երեւոյթը մեր քաղաքական կեանքի մէջ ներդնելու եւ դրանով իսկ Հայաստանը օտար խաղերի գործիքը դարձնելու փորձերը խեղդեն իրենց բնի մէջ:■

Հասարակական

Ֆրանս-հայկական համագործակցության 2001 թ. ուղղուղիները


*Քրիստոֆ Լեւոնեան
Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության
անետրական կցորդ*

Ֆրանս-հայկական քաղաքական, դիւանագիտական եւ վարչական յարաբերութիւնները հետզհետէ խորանում են: Գրանք էլ աւելի կը զարգանան փետրուարի 12-16ը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանի պետական այցի շնորհիւ:

Երկկողմ համագործակցութեան մէջ 2001 թ. կարեւոր տեղ կը զբաղեցնեն մշակութային կապերը: Այս տարի կը կազմակերպւեն համատեղ միջոցառումներ՝ ցուցահանդէսներ, դասական եւ ժամանակակից երաժշտութեան համերգներ, քառերակն եւ պարային ներկայացումներ երիտասարդ արեստագէտների մասնակցութեամբ, ինչպէս նաեւ կը կատարւեն մասնագիտական փոխանակումներ: Նախապատուքիւնը կը տրուի ժամանակակից արեստին, Ֆրանսիացի երիտասարդ արեստագէտներ կը ժամանեն Հայաստան:

Հրատարակչութեան ասպարէզում եւս մեծ ջանքեր կը գործադրեն: Այստեղ Ֆրանսիական կողմը հրատարակչական գործին աջակցող «Վահան Տէրեան» ծրագրի շրջանակներում կը կազմակերպի ժամանակակից գործերի եւ գրական մրցանակ ստացած գրքերի թարգմանութիւններ, «Գրքի ցուցահանդէս», Երեւան կը հրատարակի Ֆրանսիացի գրողների ու դասախօսների եւ հանրութեան տրամադրութեան տակ կը դնի Ֆրանսիայի դեսպանութեան տեղեկատուական կենտրոնը:

Հայաստանը Ֆրանսամէտ արանդայինների երկիր է, սակայն Ֆրանսերէնի ուսուցումը պէտք է իրականացի այդ լեզուի ուսուցիչների մշտական վերապատրաստման միջոցով: Եւրամիութեան, Եւրախորհրդի կամ Ֆրանկոֆոնիայի գործակալութեան հետ շփուող պաշտօնեաների համար պէտք է կազմակերպւեն մասնագիտական Ֆրանսերէնի դասընթացներ: Վերջապէս, Եւրոպայում երիտասարդների յարաճուն շարժումները պահանջում է զարկ տալ եւրոպական տարբեր երկրներում ընդունող հաստատագրերի զարգացմանը: Ահա թէ ինչու ուսանողներին կառաջարկենք Ֆրանսերէնի իմացութեան ստուգաթղթեր եւ կը յանձնենք լեզուի իմացութեան համապատասխան վկայագրեր:



Նախադպրոցական կրթութեան ասպարէզում կարեւոր տեղ ունի 1999 թ. նոյեմբերին հիմնադրւած Երեւանի Ֆրանսիական թեքումով մանկապարտէզը, որի զարգացումը շարունակում է եւ որն այսօր ունի 36 սան: Ծնողները միութիւն են կազմել մանկապարտէզի կառավարումն ապահովելու նպատակով:

2001թ. երիտասարդութեան միջազգային փոխանակումներ կիրականացւեն երիտասարդական եւ կինեմատոգրաֆիական թեմաների եւ առհասարակ Ֆրանսիայի ճանաչողութեան ասպարէզում:

Լաւոյիտողական ասպարէզում 1994 թ. վերջերից գերկարճ ալիքով 102,4 մեգահերց յաճախակնութեամբ Ֆրանսիայի միջազգային ռադիոկայանը օր ու գիշեր Երեւանի շրջանում Ֆրանսերէն ծրագրեր է հեռարձակում, իսկ Հայաստանի պետական հեռուստատեսութիւնը 1995թ.-ից ամսական 10 ժամ հեռաձայնում է «Կանալ Ֆրանս

ինտերնասիոնալի» ծրագրերը: 2001 թ. առաջին կիսամեակում նախատեսւած է Երեւանում անցկացնել կինոյի շաբաթ եւ Ֆրանսիական Ֆիլմերի փառատօն:

Վարչական համագործակցութեան ասպարէզում Ֆրանսախօս դիւանագէտներն ու պաշտօնեաները կը մասնակցեն Կառավարման ազգային դպրոցի եւ Պետական կառավարման միջազգային ինստիտուտի դասընթացներին, իսկ

Դատավարական ազգային դպրոցի հրաւերով հայ երիտասարդ իրաւաբաններն ու դատաւորները սեմինարների կը մասնակցեն դատաիրաւական կառուցումի զարգացման նպատակով: Նաեւ պէտք է յիշեցնել Ֆրանսիայի ու Հայաստանի ներգործնախարարութիւնների «Ոստիկանութիւն եւ անվտանգութիւն» համագործակցութիւնը, որտեղ կազմակերպւած հանցագործութիւնների, թմրադեղերի վաճառքի եւ կաշառակերութեան դէմ պայքարի կազմակերպումն ու բարելաւումը, սահմանների եւ գաղթի վերահսկումը կարեւոր դեր են խաղում, մանաւանդ համապատասխան օրէնքների ընդունման դէպքում:

Առողջապահութեան ոլորտում նախատեսւած է Փարիզի հիւանդանոցների հանրային օգնութեան կազմակերպութեան կողմից Երեւանի Սիքայէլեան անվան ինստիտուտի եւ «Էրեբուհի» հիւանդանոցի վարչական ու բժշկական աշխատողների վերապատրաստում:

Հայաստանում Ֆրանսիական ներդրումների ասպարէզում, «Ուսանողներ. ձեռնարկութիւններ» համաժողովի շրջանակներում, 2000-2001 ուսումնական տարւայ աւարտին Ֆրանսախօս համալսարանականների դասընթացներ կը կազմակերպւեն Հայաստանում գործող Ֆրանսիական ձեռնարկութիւնների մասնակցութեամբ: Այդ միջոցառումը պէտք է ծառայի աշխատանքային շուկայի

Հասարակական

կարիքներին եւ պահանջարկ-առաջարկ յարաբերութիւնների բարելամանը: Մէկ այլ միջոցառմամբ նախատեսուում է օժանդակել «համալսարան-ձեռնարկութիւններ» Ֆրանսիական խմբերի Հայաստան այցելութեանը, որպէսզի դիրացւի հմտութիւնների փոխանակումը: Լիմոժի շրջանի խմբերից մէկի առաջարկութեամբ 2001 թ. համար ընտրւած է գիտատնտեսութեան ոլորտը:

Դասախօսների եւ հետազոտողների փոխանակման ասպարէզում Ֆրանսիայի կառավարութեան բօշակների բաշխման քաղաքականութիւնը նպատակ ունի զարգացնել գիտական փոխանակումները, երկու երկրների բուհերի եւ հետազոտական կազմակերպութիւնների նոր ծրագրերի մշակումը: Նաեւ կարելու է ընդգծել Ֆրանսիայի հեռանկարային մասնակցութիւնը Հայաստանի Ֆրանսիական համալսարանի նախագծին:

Ապակենտրոնացւած համագործակցութեան ասպարէզում Հայաստանը Ֆրանսիայի համար առաջին երկիրն է վերջին տարը տարում ոչ կառավարական համագործակցութեան շրջանակներում իրականացւած նախագծերի ու գործողութիւնների առումով: Այդ ժամանակահատուածում Ֆրանսիայի արագործնախարարութիւնը մասնակցել է օժանդակել է տասնվեց մոնիցիլայախտեաների, չորս գլխաւոր խորհուրդների եւ երկու մարզերի նախաձեռնութիւններին, որոնց ընդհանուր գումարը 12 մլն Ֆրանկ է: Դա կազմում է արտասահմանում Ֆրանսիական տարածքային միատրների իրականացրած գործողութիւնների ընդհանուր գումարի մօտ 2,5 տոկոսը: Այստեղ գլխաւոր ոլորտներն են կրթութիւնը, վերապատրաստումը, առողջապահութիւնը եւ սոցիալական ապահովութիւնը: Միեւնոյն ժամանակ Հայաստանում գործող ոչ կառավարական կազմակերպութիւնները, որոնց բուն հարկ է նշել «Մովի դէմ միջազգային գործողութիւն», «Համագործակցութիւն-Հայաստան», «Առաքելութիւն երեխաներ-ռուս», «Աշխարհի բժիշկներ» եւ «Ֆրանսահայ բժշկական միութիւն» կազմակերպութիւնները, շարունակում են ջանքեր գործադրել եւ միջոցներ կուտակել մարդասիրական եւ սոցիալական նպատակների իրականացման համար:

2000 թ. յուլիսի 18-ին նախագահ Ռոբերտ Բոչարեանը կատարեց Ֆրանսիական համալսարանի բացումը: Հաստատութեան դռները բացեցին նոյն տարւայ հոկտեմբերի 2-ին. 150 ուսանողներ ընտրեցին մրցոյթով: Այս նոր համալսարանը յարմարեցւած է Հայաստանի տնտեսութեան ներկայիս կարիքներին: Դասաւանդման ընթացքում ուսանողները կը իրացնեն Ֆրանսիայի առետրի բարձրագոյն դպրոցների ծրագիրը յիշեցնող գիտելիքները (կառավարում, շուկայագիտութիւն, միջազգային առետուր եւ իրաւագիտութիւն): Ծրագիրը համակարգել է Լիոնի միջազգային առետրի կենտրոնը՝ Լիոնի երրորդ համալսարանի մասնակցութեամբ (իրաւագիտութիւն):

1998թ. մշակւած Հայաստանի Ֆրանսիական համալսարանի նախագիծը կոնկրետացւում 2000 թ. սկզբներին: Պատգամաւոր, ՀՀ Ազգային ժողովում Հայաստան-Ֆրանսիա բարեկամութեան խմբի նախագահ Արթուր Բաղդասարեանը որոշեց մասնակցել նախագծին եւ նախաձեռնեց ՀՀ կրթութեան նախարարութեան յատկացրած շէնքի նորոգումը՝ հայ եւ Ֆրանսիացի մասնաւորները ներդրողների Ֆինանսական աջակցութեամբ: Հայաստանում Ֆրանսիայի դեսպանութեան աջակցութիւնը վայելող

համալսարանը հետաքրքրեց նաեւ Գերմանիայի դեսպանութեանը՝ նախագիծը դարձնելով Եւրամիութեան սահմաններից դուրս Ֆրանս-գերմանական համագործակցութեան դրսեւորման մի նոր օրինակ:

Տնտեսական յարաբերութիւնների ասպարէզում Ֆրանսիան առանձնաչափ տեղ է զբաղեցնում Հայաստանի տնտեսութեան մէջ: Նա երկու խոշոր ներդրում է կատարել Հայաստանի գիտատնտեսութեան մէջ (50 մլն դոլար), բայց մնում է առետրական փոքր գործընկեր: 1999թ. երկու երկրների միջեւ առետրաշրջանառութեան ծաւալը նուազեց 40 տոկոսով, բայց 2000 թ. առաջին տեսակներն արձանագրում են փոխանակումների որոշ ան արտահանումների ծաւալն աճել է մօտ 126 մլն Ֆրանկով կամ 1,98 տոկոսով (սարքաւորումներ, գիւղ-մթերքներ), իսկ ներմուծումների ծաւալը՝ 3,3 մլն Ֆրանկով (0,16 տոկոս): Ֆրանսիան Հայաստանի 12-րդ մատակարարն է եւ 19-րդ յաճախորդը Բելգիայից, Գերմանիայից, Իտալիայից եւ Մեծ Բրիտանիայից յետոյ, բայց առետրի միջոցով: Փոխարէնը Ֆրանսիան օտարերկրացի գլխաւոր ներդրողներից մէկն է: 1995 թ. նոյեմբերին ստորագրւած ներդրումների խրախուսման ու պաշտպանութեան համաձայնագիրը ուժի մէջ մտաւ 1997 թ. յունիսի 21-ին:

Մէկ տասնեակ Ֆրանսիական ձեռնարկութիւններ գործում են Երեւանում, եւ վեց տասնեակ ընկերութիւններ ու Ֆինանսական հաստատութիւններ գործարար կապեր են հաստատել տեղական հաստատութիւնների հետ: Տասնչորս ընկերութիւն տեխնիկական օժանդակութիւն է ցուցաբերել TACIS ծրագրի շրջանակներում:

Հայաստանը Ֆրանսիացի եւ առեսարակ օտար-երկրեայ ներդրողներին առաջարկում է լաւ հեռանկարներ: Միջազգային Ֆինանսական հաստատութիւնների օգնութիւնը, սպառման սովորութիւնների փոփոխումը, երկու ժամանակ փակ եղած հասարակութեան բացումը, նոր տեխնոլոգիաների ծարաւը բարեպատեհ առիթներ են ստեղծում Ֆրանսիական ձեռնարկութիւնների համար: Այդ հնարաւորութիւններն ակայ են մասնատրապէս տրանսպորտի հատուածում եւ էլեկտրոնային, գիւղա-տնտեսական, օպտիկական, քիմիական եւ դեղագործական, հանրային ենթակառուցվածքում, ինչպէս նաեւ բժշկական ու Ֆինանսական ծառայութիւնների, համակարգչային ծրագրերի, զբօսաշրջութեան զարգացման ասպարէզներում: Հայաստանի հանդէպ Ֆրանսիական խոշոր ձեռնարկութիւնների զգուշաւոր դիրքորոշումը ընդ-րան կարող է զրկել իրական հնարաւորութիւններից, մաս-նատրապէս հանրային ծառայութիւնների սեփականա-շրնդորման գործառնութիւններում, մինչդեռ Ֆրանսիացի արդիւնաբերողների բանիմացութիւնը հանրայայտ է:

Այդուհանդերձ, չունենալով սեփական կապիտալ, Հայաստանը օտարերկրացի ներդրողների կարիք է զգում, եւ իր շուկայի շահութաբերութիւնն ապացուցելու համար պարտաւոր է հարմարել, արձագանքել, մի խօսքով շար-ժուն լինել: Բացի դրանից, միջազգային շուկային աւելի լաւ յարմարելու համար վարչակազմը եւ տեղական իշ-խանութիւնները պարտաւոր են ապացուցել, որ իրենք ըն-դունակ են ստեղծելու համապատասխան նորմատիւային տեսական ու քափանցիկ մթնոլորտ, պայքարել դանդաղ-կոտութեան, անգործութեան եւ անցեալի ժառանգութեան դէմ եւ յարթահարել այնպիսի չարիքներ, ինչպիսիք են կաշառակերութիւնն ու հովանաւորչութիւնը: ■

Մշակոյթ

Արտագ-Մակու գաւառը եւ սուրբ Թադէի վանքը

(Շար. նախորդ համարից)

Արտագ գաւառը Հայաստանի նշանաւոր նախարարութիւններից՝ Ամատունիների ժառանգական սեփականութիւնն էր: Արշակունիների անկումից յետոյ՝ հինգերորդ դարում, Ամատունիները որոշ ժամանակաշրջան պահեցին իրենց իշխանութիւնը Արտագի վրայ: Գաւառը սահմանամերձ լինելով իր վրայ է կրել քաղաքական դէպքերի ազդեցութիւնը: 591 թականին արարուում է պարսկական պատերազմը: Բիզանդիայի՝ Մորիկ եւ Պարսկաստանի Խոսրով թագաւորների միջեւ կնքւած դաշինքի համաձայն կրկին երկու մասի է բաժանուում Հայաստանը: Ըստ դաշինքի սահմանագիծ է դառնում Կոտէից գաւառը, Ագատ գետը, Կոզովիտ գաւառը, Արտագը, մինչեւ Վանայ լիճը:

Եօթերորդ դարից Ամատունիները թուլանում եւ ընկերւում են հետզհետէ հզօրացող, սահմանակից Արծրունիների գերիշխանութեան տակ: Վերջիններիս իշխանութիւնը այնքան ընդհանրացած է եղել, որ կարծեցեալ Շապուհ Բագրատունի պատմիչը՝ 9-րդ դարի վերջին Գագիկ Ապուրանի սպանութեանը մասնակցող Ամատունի եղբայրներին ճանաչում է որպէս Արծրունիներ:

Արաքական Աբրահամ հարստութեան նշանաւոր խալիֆա Հարուն Ալ Ռաշիդը (786-809) ազատելու համար Ուլբեղլայ (Ուրեղուլլահ) կոչւած իր եղբորից, որ գահի կռիւ էր սկսել, նրան է յանձնում Ատրպատականի, Հայաստանի, Վրաստանի եւ Աղանքի իշխանութիւնը: Ուլբեղլայի կողմից նշանակւած ոստիկան Մուլէյմանի կեղեւումները, հարկահանութիւնները եւ բռնութիւնները հասում են անտանելի չափերի: Այդ մասին 8-րդ դարի պատմիչ Դետոն վարդապետը գրում է. «Ոչ ոք էր տէր ընչից իւրոց, այլ առհասարակ վարէին յարաբի: Եւ բազումք ինքնակամութեամբ բողոքին զհօսու եւ զանեղայս, եւ գնային փախստական վասն ոչ բերելոյ զծանրութիւն աղէտից» (Լ. Վ. «Արշաւանք արաբայ ի Հայս» Փարիզ, 1857, էջ 202):

Ահա այս ժամանակ է, 789 թականին, որ Արտագի իշխանական տոհմի նախարար Շապուհ Ամատունին եւ նրա որդին Համանը այլ նախարարների հետ միասին մի հսկայաթիւ բազմութեան՝ տասներկու հազարի զլուխն անցած զաղբում են դէպի յունաց կողմը: Թշնամին՝ արաբ իշխան Ուլբեղլայը ընկնում է նրանց ետեւից եւ Վրաստանի սահմանների վրայ, Կող գաւառում հասնում է գաղթականներին: Տեղի ունեցած մարտերի ընթացքում զաղթականները կոտորում են արաքական զօրքի մի մասին եւ մնացածներին փախցնում, իսկ իրենք անցնում են Տայոց աշխարհը: Կոստանդին կայսրի հրամանով նրանց պատուով ընդունում են եւ բնակեցնում Խաղտիք երկրամասում: Նրանց կառուցած բնակավայրը Համան իշխանի անունով կոչւում է Համանշէն, իսկ իրենք Համշէնցիներ: Բնական է, որ Արտագի Շապուհ եւ Համան Ամատունի իշխանների գլխաւորութեամբ գաղթած ազգաբնակչութեան խոշոր տոկոսը եղել են արտագցիներ: Արտագի եւ Համանի մշակութային արժէքների համատեղ ուսում-

Սերոժ Թիլիմեան

նասիրութիւնը կարող է օգտակար լինել նրանց միջեւ եղած յարաբերութիւնները բացայայտելու համար:

Թովմա եւ Անանու Արծրունիներ պատմիչները իրենց մատեններում կցկտուր տեղեկութիւններ են փոխանցել Արտագ գաւառի կապակցութեամբ:

Թովմա Արծրունին իր երկի երրորդ դպրութեան ԻԹ գլխում տեղեկացնում է, որ Աշոտ Արծրունու մահանից (904 թ.) յետոյ, երբ Գագիկ եւ Գուրգէն իշխանների միջեւ իրենց տիրութեան բոլոր գաւառների բաժանում է տեղի ունենում, Արտագ գաւառը մի շարք այլ գաւառների հետ բաժին է ընկնում Գագիկ իշխանին:

Վերնում յիշւած Արծրունի իշխանների ժամանակ Արտագի եպիսկոպոսութիւնը գտնում էր Ամատունեաց տոհմի ձեռքում: Այս կապակցութեամբ Թ. Արծրունին վերկայում է, որ երբ Ատրպատականի պարսիկ էմիրը յարձակում է գործում Վասպուրական նահանգի ճաշ կամ ճաշոտ գաւառի Շամիրամ քերդում նստած Ակեացի տոհմից Թադէու Շերեփեանը ելք գտնելու յոյսով դիմում է Ամատունեաց եպիսկոպոսին, որ նստում էր Թադէի վանքում: Այս մասին պատմիչը գրում է. «Գրէ առ սուրբ եպիսկոպոսն Գրիգոր Ամատունեաց տանն, որ նստէր ի հանգստի սրբոյն Թադէուսի Առաքելոյ յԱրդրական գաւառի՝ գտնել զելս իրացն եկեալ հասեալ հինին»: Թադէու Շերեփեանի եւ Ատրպատականի էմիրի միջեւ պատերազմը տեղի է ունենում Փայտակչտան գիւղում, որ հաւանօրէն գտնում է Արտագ եւ ճաշոտ գաւառների միջեւ: Անանու Արծրունին նոյն պատերազմի վայր է յիշատակում Գերատայ դաշտը:

Համաձայն Անանու Արծրունու, Գագիկ արծրունին, Ատրպատականի Իսուփ Ամիրայի բացակայութեամբ, այլ բերդերի հետ միասին գրաւում է նաեւ Մակի բերդը. «Բայց ի գնալն Յուսիպայ ամիրային ի Պարսս՝ գնաց եւ թագաւորն Գագիկ ի գաւառն Կոզովիտ, եւ պաշարեալ զանառն Դարիւնս՝ գողացեալ առնու ի գիշերի, ըստ յաջողելոյ մնա ի վերուստ. առնու եւ զբերդն Մակուայ. եւ անտի յառաջ մատուցեալ առնու զբերդն Ուղեոյ եւ տիրէ գաւառացն, սկսեալ ի Կոզովտէ մինչեւ ցմիջոց Ուղեոյ եւ Մասեաց ոտն»:

13-րդ դարում քաղաքական նոր պայմաններ ստեղծւեցին Արտագի հայկական՝ աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութեան կազմաւորման համար: Առաջին պայմանը մոնղոլական արշաւանքների նախօրեակին եւ ընթացքում ստեղծած քաղաքական իրադրութիւնն էր, երկրորդը՝ կաթոլիկ եկեղեցու նոր քարոզչութիւնը:

13-րդ դարի 40-50-ական թականներին հայ քաղաքական եւ հոգեւոր գործիչները աշխոյժ գործունէութիւն էին ծաւարում մոնղոլական հզօրութիւնը ի նպաստ հայերի օգտագործելու համար: Մոնղոլ խաների մօտ իբրեւ գրագիր, թարգմանիչ եւ այլ ծառայութիւններ մատուցող հայ հոգեւորականները, աշխատում էին մոնղոլների եւ մաննեղականների հակադրութիւնները:■

Շար. 3

Մշակոյթ

àñáß³ İÝ³ ñİÝ»ñ
ŞP³ ÑÝ³ Ü¿ ü»ñ¹ áí èÇ! ¼à áèÇ
í»ñ³ µ»ñ»³ Ē Á³ Û³ Ý³ İ³ İÇó
Ñá. »µ³ ÝáóÃ»³ Ý i »è³ ÝİÇóÝÇó

*Մտքոյ Բալայեան
Ղոկտոր- պրոֆեսոր
թարգմանիչ՝ ճարտ. Նիկիտ Միրզայեան*



Գուցէ «Ռոստոմ»-ից յետոյ, ամենադրական կերպարը, «Միաւոշ»-ն է: Ընդ որում, նա լինելով՝ ուշիմ, քաջ ու նրբանկատ, կարողանում է նաեւ հաւատարմութեան, ճշմարտութեան, ազնւութեան, եւ իմաստութեան օրինակն ու խորհրդանիշը լինել: Շատ պատ-

կերներում է որ, նա կերպարի ցայտուն ընդգծումները, բացայայտօրէն դրսեւորած են: Նշենք այդ պարզանեւորից մէկը: Երբ «Փիրան»-ը՝ «Միաւոշ»-ի աները, նրան առաջարկում է ամուսնանալ «ԱՖրասիա»-ի աղջկայ՝ «Ֆարանգիս»-ի հետ այն միտումնաւորութեամբ, որ այս ամուսնութիւնը վերջապէս կը փարատի հին թշնամութիւններն Իրանի եւ Թուրանի միջեւ, այդ պահին «Միաւոշ»-ի դէմքը, ամօթխածութիւնից կարմրում է, բայց վերջապէս ընդունելով «Փիրան»-ի փաստարկումը, ամուսնանում է «Ֆարանգիս»-ի հետ:

«Միաւոշ»-ի վախճանը՝ տմարդի սպանելը, «ԱՖրասիա»-ի հրամանով, բացայայտ նմոյշն է նրա միամտութեան ու դիրքահաստութեան: Մինչդեռ, նա կարող էր լըսել «Ֆարանգիս»-ի խրատը եւ փրկել անխուսափելի մահից:

Ինչպէս արդէն նշել ենք, Ֆերդովսին մարդու հոգեկան լարածութիւնները եւ մարդկային յոյզերն ու զգացումները, որպէս մի հոգեբան, արտակարգ հմտութեամբ է նկարագրում: Բերենք մի այլ ցայտուն օրինակ: Գա «Ռոստոմ»-ի ու «Թահմինէ»-ի վարելակերպն ու խօսակցութիւններն են իրենց զուակի՝ «Մոհրաբ»-ի մահից յետոյ:

Ֆերդովսու «Շահնամէ»-ն, իրապէս կարելի է դատաստանագիրք էլ անունել, որովհետեւ արդարութեան, բանականութեան եւ տրամաբանական խաղաղասիրութեան իրական իմաստը, տարբեր պարագաներում, շատ տեղին է ներկայացրած: Մօտատրապէս սոյն էպոսի բոլոր կին կերպարները (քացի «Մուրաբէ»-ից), հեշտութեամբ կարող են աշխարհի կանանց համար լինել որպէս բարոյականութեան եւ պարկեշտութեան օրինակ: Ընդհանրապէս, կարելի է ասել, որ Ֆերդովսին, «իդէալ մարդու» կերպարը այնպէս է նկարագրել, որ նա կարող է օրինակելի լինել բոլոր մարդկութեան համար:

Առասպելներում գերբնական ուժերն են միջամտում առհասարակ նրանց տալով սնապաշտական երանգաւորում: Բայց, «Շահնամէ»-ն համեմատ ուրիշ շատ ազգերի դիցազանավէպերին ատելի քիչ սնապաշտութիւն է պարունակում: Նկատի առնելով բոլոր կողմերը, կարելի է ասել որ, Ֆերդովսին, բարոյականութեան ջատագով է նաեւ: Քանի որ մէտատրապէս ամբողջ դիցազանավէպում,

նա պատմում ու բնորոշում է, մարդկային վսեմ բարոյականութիւնն ու մարդուն յատուկ առաքելութիւնն, այս վաղանցուկ աշխարհում, եւ գովերգելով այդ ամէնը՝, խըստօրէն դատապարտում է՝, նուստացուցիչ ու արատաւոր արարքները:

«Հոմերոս»-ի «Իլիադ»-ում, որը յունական մի էպոս է, հերոսներից իւրաքանչիւրն ունեն իրենց աստածը, եւ երբեմն էլ անւայել ու մոլորած արարքներ են ցուցաբերում: Բայց Ֆերդովսու դրական հերոսները ընդհանրապէս, ինքնակամ ու հաստատակամ անձեր են:

Չնայած անհրաժեշտ պահերին հաղորդակցում են իրենց Աստծու հետ եւ ապաւինում Աստծուն: Ինչպէս օրինակ՝, «Ռոստոմ»-ն առաջին պարտութիւնը կրելով «Մոհրաբ»-ից մեկուսանալով հայցում է բարձրեալ Աստծուց, որ Աստած իր սկզբնական ուժը վերադարձնի իրեն, եւ այդպէս է լինում: (Նախապէս հակառակն էր հայցել Աստծուց: Որովհետեւ հսկայ ուժից եւ կարողութիւնից քայլելիս՝, գետինն ու լեռը նոյնիսկ, փոս էին ընկնում իր ոտքերի տակ):

Ֆերդովսին, ինչպէս ասացինք՝ խաղաղասէր է: Միայն այն դէպքում է պատերազմի կողմնակից, երբ դա լինի չարագործների եւ բռնակալների դէմ՝ ի շահ հայրենիքի պաշտպանութեան: Յիշենք այն պահը, երբ «Թուրան»-ի թագաւոր՝ «ԱՖրասիա»-ը, խաղաղութեան առաջարկ է անում եւ «Ռոստոմ»-ն ու «Միաւոշ»-ը որ, պարսից բանակի հրամանատարներն էին, սկզբունքօրէն ընդունում են այդ առաջարկը, «Ռոստոմ»-ն առաւելագոյն ջանքն է գործադրում, որպէսզի պարսից թագաւոր՝ «Էլքարուս»-ն էլ ընդունի հաշտութիւնը, բայց նրա բոլոր ջանքերը անարդիւն են անցնում:

«Ռոստոմ»-ի անհատականութեան ու դերի մասին, Ֆերդովսու էպոսում՝ ժամանակակից հոգեբանութեան տեսանկիւնից ասելիքներ շատ կան, որոնց անդրադարձել ենք մասամբ: Բայց երբէք չպէտք է մոռանալ, որ նա եւ միգուցէ «Միաւոշ»-ն էլ, «Շահնամէ»-ի միւս հերոսներից, տարբերում են հիմնականում: Տողերիս գրողի տեսակէտով, Ֆերդովսին էլ կամեցել է, որ այս երկու կերպարները լինեն խորհրդանիշ եւ օրինակ՝ տարբերելով միւսներից:

«Ռոստոմ»-ի տիպարը Իրանի ժամանակի պայմանների է իրական պահանջների ծնունդն էր, որ իրականացաւ, կամ պէտք է ասել՝ կրկին ծնեց: (Արդէն ասացինք, որ «Ռոստոմ»-ի անունը պարսկական ու հայկական աղբիւրներում, դարեր նախքան Ֆերդովսին էլ յիշատակւած է): Սոյն խնդիրը առկայ է նաեւ ուրիշ ազգերի դիցազանութեան մէջ, ինչպիսին են՝, Ֆրանսացի «Ռուան»-ն ու «Ժանդարք»-ը, եւ հայոց «Մասունցի Գալիթ»-ը: Ֆերդովսին ջանացել է, իրանցիների կրած ռազմական պարտութեան բարոյոյթն արաբներից, որ պատճառ էր դարձել իր մէջ նաեւ բարոյոյթ առաջանայ՝ բացայայտել ու բուժել: Այս տեսակէտից դա շատ է նմանում, ժամանակակից հոգեբանութեան որոշ մեթոդներին:

Ճշմարիտն ու ճշմարտանման՝ դրոյթը, որը գրականութեան ու արեւստի մէջ մշտապէս հանդիսացել է հիմնական դրոյթներից մէկը, լաւապէս իրագործել է Ֆերդովսու «Շահնամէ»-ում՝ նոյնիսկ զարմանահարշ ու հրաշքանման իրադարձութիւններում ու դէպքերում: ■

Ճար. 3

1 Vraisemblable

Երկու ճակատագիր

Պատ



Ինքնութեանս գրքոյկի լուսանկարը, ծածկոցով դարձնելու նպատակով, ձեռնա-յարել էի այն:

Անցագիրս նորոգելու համար երբ դիմեցի պատկան հաստատութեանը, անդրադարձայ, որ օրէնքի խախտում են կատարել եւ հիմա, պէտք է ինքնութեանս գրքոյկի նկարը փոխել ամբողջովին եւ իմ անձնական սխալը սրբագրելու համար ստիպած էի դիմել այն գրասենեակին, որտեղից ստացել էի ինքնութեանս գրքոյկը:

Պարտադրած, երկար տարիներից յետոյ, գնացի իմ ծննդավայրը, ուր անց էի կացրել, դառն ու քիչ-անուշ յուշերով շաղախսած իմ մանկութիւնը:

Լուսաբաց էր: Արեւը դեռ չծագած, ես ու իմ երկու ուղեկիցները ճամփայ ելանք:

Ճանապարհին երազում էի մեր գիւղի՝ իմ վաղ մանկութեան օրրանի մասին, որտեղ հանգչում են իմ հարազատներից շատերը՝ մեծ հայր, մեծ մայր, հօրեղբայր, եղբայր եւ ընկեր: Աշխատում էի վերյիշել այն ամէնը՝ ինչ կապած էր մեր գիւղին՝ հայաբնակ թաղն ու մեր դրացիները, դպրոցն իր տքնաջան աշխատանք տանող ուսուցիչներով, եկեղեցին, ուր իմ պապերից ու հարազատներից շատերը ամէն առաւօտ ու իրիկմասպահ աղօթք են մրմնջացել իրենց կեանքի բարելաման եւ չգործած ու գործած «մեղքերի թողութեան» համար:

Իմ խաղընկերներին են յիշում, որոնք իրենց փայլուն աչիկներով, զանգուր ու խուճում մագերով, արեւից այրւած կարմիր թուշիկներով ու ցրտից ճաքճաք թափկներով մնում են իմ յիշողութեան մէջ եւ նրանց քաղցր ու անուշ կանչերը դեռ հնչում են ականջիս, -«Արի... արի՛ վազել-բռնել խաղանք»: Եւ վերջապէս մեր տունն են յիշում, որտեղ մայրս ինձ օրօր է ասել եւ օրօրի հետ մէկտեղ բախտատրութիւն մաղթել, եւ ինչ լաւ է, որ նա չտեսաւ թէ ինչպէս իր բախտատրւած զաւակի աշխարհը, շատ կարճ ժամանակից յետոյ, ճակատագրի գնդակի հարւածից համակեց դառը ցաւով, կորցնելով այն՝ ինչ ամենաթանկագինն էր իր համար:

Մի քանի ժամ ճամբայ կտրելուց յետոյ, հասանք Շ. գիւղաքաղաքը: Ինքնութեանս գրքոյկի գործը շատ շուտ կարգադրեց եւ ամմիջապէս ուղեւորեցի՞նք դէպի մեր գիւղը:

Ճանապարհին երեքս էլ լուռ էինք ու մտախոհ, երեքս էլ մխրճել էինք մտորումների մէջ եւ մի անանց տխրութիւն այնպէս էր մեզ համակել, որ նրա կաշկանդող կապանքներից դժար էր ազատել: Խօսելու կարողութիւնն անգամ խլել էր մեզանից եւ երեքս էլ կարծես պատեհ առիթ էինք գտել՝ մեր անցեալի դառն ու տանջող օրերը վերյիշելու: Երեքիցս երկուսը կրել էին բնութեան ու ճակատագրի գործած չարիքը, իսկ երրորդը՝ ստացել էր մարդու տաճ հարւածից մի անբուժելի վէրք:

Նախքան գիւղ մտնելը հանդիպում ենք մի պառու կրնոջ, որը ուռնում շաքի տակ նստած իր այգին է հսկում: Բարեւում ենք եւ ամմիջապէս գրոյցի բռնում:

-Ո՞վ էք դուք:

Հետաքրքրութեամբ հարցնում է նա:

-Մեր ծնողները այս գիւղի հին բնակիչներից են եղել.- պատասխանում են նրան:

-Ո՞ւմ գաւակներն էք:

Տալիս ենք ծնողների անունները:

-Վա՛՛, ձեզ մատաղ... բղաւում է ծեր կինը եւ իր կոշտ ու ոսկրացած ձեռքերը մեզ մեկնելով, մէկ առ մէկ գրկում ու յետոյ էլ իր դողդոջուն մատներով մեր դէմքերը շօշափելով սկսում է այնպէս համբուրել, ինչպէս մի հարազատ մայր երկար տարիներից յետոյ գտնում է իր միմուճարին ու համբոյրով կամենում է կարօտն առնել: Վայրկեանապէս սկսում են խորհել, որքան լաւ կը լինէր, եթէ մեր շրջապատի բոլոր մարդիկ, այս չարքաշ եւ ընչազուրկ գիւղացիների նման ազնիւ ու բարի հոգի ունենային... Որքան հանգիստ ու խաղաղ կապրէինք:

-Ես ձեր տներում քանի-քանի գորգեր են գործել եւ իմ գաւակներին հէնց այդ տներում են մեծացրել,- լացակումած ձայնով խօսում է կինը եւ արցունքի կաթիլներն իր խամբած աչքերից հանդարտ ցած են զլորում՝ ցաւից ու գրկանքից ակօսացած ու թորշոմած դէմքին:

-Ի՞նչպէս են ձերոնք: Սկսում է թել մի քանի անուններ...

-Բոլորն էլ մահացել են,-պատասխանում են նրան: Խեղճ կինը ատելի է յուզում եւ սկսում է հեկեկալ:

Ո՞վ գիտի, թէ ինչ էր այդ պառու կնոջ դառը լացի բուն պատճառը: Արդեօք ապրած օրն՝ն էր յիշում, թէ՞ իր վաղեմի ծանօթների կորուստն էր զգում, կամ թէ զգաց, մօտ գալիքում ինքն էլ այդ անվերադարձ ճամփան պիտի կտրի:

Մտնում ենք գիւղ: Իջնում ենք ներքեւի թաղ, որտեղ գտնում էր մեր տունը:

Աստ՝ւած իմ, ինչէր են տեսնում՝ մի շարք փլատակւած ու աներւած տներ: Գիւղի երկու թաղերն էլ ամբողջպէս ամայացած ու անմարդաբնակ են դարձել: Մարդուս թում է, թէ այստեղից մի արմախում ջարդարար ոտոխ է անցել, որ ամէն ինչ հրի ու սրի քաշելով այդպէս տակն ու վրայ է արել...

Իսկ մեր գիւղը ամայացել էր լոկ այն պատճառով, որ պայմանների հետեւանքով, հարկադրւած լքել էին իրենց պապեանական տունն ու տեղը՝ հաստատուելով մայրաքաղաքում:

Մի քանի վայրկեան աչքերս փակում ու յիշում են մեր գիւղը իր շէն ժամանակ, երբ ամէն առաւօտ տասնեակ տների երդիկներից քուլա-քուլա ծուխ էր բարձրանում դէպի լազուր երկինք ու աքաղաղներն իրենց ծուրուրոյով գիւղացիներին արթնացնում եւ արեւոյս էին տալիս, որ կեանքը սկսել ու եռում է աւանում: Կարծես լսում են եկեղեցու զանգերի ղոզանջը, որ գիւղացիներին ամենօրեայ աղօթքի է կանչում, ու նաեւ տեսնում են դպրոցի բակը իր սաներով, որոնք եկել են Այր-բեն սերտելու: Ու նաեւ գիւղի ջահել տղամարդկանց, որոնք եզները լծած դէպի հանդ են գնում եւ նորահարսներին ու դեռատի աղջիկներին, որոնք կժերն առած աղբիւրից ջուր բերելու են դուրս եկել... Կածես դէմս են ելնում Ժեմիկը, Աշխէնը՝ իմ մանկութեան խաղընկերուհիները եւ սկսում ենք վազել-բռնել խաղալ... եւ յետոյ բոտն կարօտով յիշեցի այն օրը, երբ քաղաքից գիւղ գնացել եւ «աչքակողայիկ» խաղալու ընթացքին, աչքերս փակ, Ժեմիկենց դարպասից դուրս են

Մշակոյթ

վագում եւ ուժգնօրէն դիպչում եմ մէկին: Երբ աչքերս բացում եմ, դիմացս կանգնում է սեւ աչքերով, թխադէմ Արշօն... Նա էլ էր քաղաքից ամառանոց եկել: Երկուսիս հայեացքներն իրար են բախում եւ ... Բայց տարիներ յետոյ հասկացայ, որ դրանք իմ առաջին սիրոյ հայեացքներն էին՝ անկեղծ ու անարատ: Յետոյ տեսնում եմ նաեւ իմ ընկեր Իշխանին, որ գառներն առաջ գցած դէպի դաշտ է գնում:

Չգիտեմ քանի վայրկեան էր անցել, երբ ուսիս վրայ զգացի մի ձեռքի ծանրութիւն, սքափեցի, ընկերներիցս մէկն էր, մտնելով իմ երեսակայական աշխարհը, ուզել էր սքափեցնել ինձ:

Սքափելով, սկսում եմ շուրջս նայել: Ոչ մի կանգուն տուն ու խրճիթ՝ իր ծխացող թոնիրներով ու ծովսը երկինք տանող երդիկներով. ոչ մի բանուկ եկեղեցի՝ իր դօղանջող զանգակներով եւ ոչ մի դպրոց՝ իր սաներով: Ոչ հանդ գընացող հօտաղ եւ ոչ աղբիւրից ջուր բերող ջահէլ հարս ու աղջիկ եմ տեսնում: Չկայ քիչ առաջ երեսակայիցս նշոյլ անգամ... Այդ պահին բնութիւնը գեղեցիկ էր, բայց ոչ մի կենդանութիւն չկար՝ նրան ոգի տալու համար:

Մտազբաղ, լուռ ու տրտում դուրս եմք գալիս գիւղից եւ ուղեւորում դէպի գերեզմանատուն: Այնտեղ, մեր դէմ բացում է լքած ու մոռացած գերեզմանատան տխուր պատկերը: Ըրմաքարերը շատ վաղուց է, որ այցելու չեն ունեցել: Ամէն մէկս փնտրում ենք մեր հարազատների գերեզմանները:

Սկսում ենք կարդալ քարերի փորագրութիւնները: Զարմանալիւն եւ հետաքրքիրն այն էր, որ որոշ գրութիւններ ապացուցում էին, թէ որքան վաղ ժամանակներից են մեր պապերը այդ գիւղում բնակել՝ տուն շինել, օջախ կառուցել եւ յետոյ էլ թողել ամէն ինչ ու հեռացել:

Մէկ քարից միւսն անցնելով, յանկարծ կանգ եմ առնում մի տափակ ու անշուք շիրմաքարի վրայ: Մէկ էլ ասես սրտումս մի սուր խայթոց եմ զգում ու մնում մեխաւած: Կարծես երկինքը փուլ է գալիս: Աչքերիս առաջը սեւանում է ու գլխապտոյտ եմ ստանում եւ կարկամում: Վայրկեաններ յետոյ բաց եմ անում աչքերս ու նայում կողքիս կանգնած ընկերներիս, որոնք շշմած ինձ են նայում թէ ինչ է կատարում: -Ոչինչ,- հագիւ շշմում եմ, -Իշխանն է այստեղ յափտեմական քուն մտել եւ սկսում եմ դառնօրէն հեկեկալ...

Կրկին դեմս է ելնում այն թխիկ ու թմփլիկ մանուկ Իշխանը, որի հետ տասնեակ անգամներ գիւղի բակերում ու կտուրներում վազել-բռնել ենք խաղացել, յետոյ յիշում եմ գառնարած դարձած Իշխանին, որ երբ քաղաքից գիւղ էի գնացել, չուզեց ինձ տեսնել եւ մեր վերջին հանդիպումը եղաւ այն, որ ես գիւղի ծայրում կանգնած մնացի, իսկ ինքը կորաւ գառների ոտնատեղից ելած փոշիների մէջ...

Չգիտես ի՞նչու Իշխանի շիրմի վրայ կանգնած վեր-յիշում եմ մի հանդիպում եւս: Մի հանդիպում, որ տեղի ունեցաւ շուրջ եօթ տարի առաջ 1980 թ. ամռանը, երբ իրագործեց իմ իղձերից ամենակենսականը՝ այցելեցի հայրենիք:

Երեսնամու մի առաւօտ, փողոցով քայլելիս, նկատում եմ, որ դիմացի մայթից մէկը դէպի ինձ է գալիս: Ուզում եմ ճամփայ տալ նրան, բայց նա չի անցնում, այլ կանգնում է ճիշտ դիմացս ու աչքերիս է նայում: Նա սեւ աչքերով, ալեխառն ու զանգուր մազերով, մօտ 40 տարեկան մի տղամարդ էր: Նրա հայեացքը ծանօթ էր ու հարազատ:

Մի քանի վայրկեան մենք խօսում ենք հայեացքով, յետոյ նա լռութիւնը խախտելով հարցնում է.

-Դու Արծունակը չե՞ս:

-Այո՛, իսկ դու Արշօն ես:

-Այո՛, ես Արշօն եմ:

Տասնութ երկար տարիներից յետոյ հանդիպում եմ նրան: Այդ օրը սփիւռքի նախապատրաստական դասարանից բացակայեցի: Նստեցիմք փողոցի մատարաններից մէկի վրայ ու սկսեցիմք զրուցել: Խօսում էինք ամէն ինչից, նա իր մասին էր պատմում եւ՝ իմ: Նա արդէն ճարտարապետ էր դարձել եւ վարում էր մասնագիտական մի մեծ բաժին: Ամուսնացել ու բախտատուրել երկու զաւակներով՝ մի տղայ եւ մի աղջիկ:

Իսկ որտեղից-որտեղ, մանկութեանս խաղընկեր, գառնարած Իշխանի մոռացած ու լքած գերեզմանի վրայ ես Արշոյին՝ նրա հօրեղբօր տղային եմ յիշում, որոնք չնայած երկու եղբօր զաւակներ էին, բայց երկու տարբեր ճակատագրերի արժանացան:

Դառնացած ու վրդոված հրաժեշտ եմ տալիս Իշխանի գերեզմանին ու ճամփայ ընկնում դէպի քաղաք:■

Արեւտեան Հայաստանին...

Նւիրում եմ
Եղեռնի հայ
գոհերի յիշատակին

Որքա՞ն երազներ, իղձեր ու փափագ,
Որքան մորմոքում անհատնում սերեր
Փորձեցի լցնել սրտիս մախաղում
Ու ընկայ ճամբայ, եկայ քեզ այցի...

Որքա՞ն մութ գիշեր յոյսա՝ լոյս դարձաւ,
Որքան աղօթքի նշխար՝ աղ ու հաց
Փորձեցի լցնել հոգուս խորանում
Լիալոյս եկայ, եկայ քեզ այցի...

Որքա՞ն քո սիրով մտայ պայքարի,
Յանուն կեցութեան մեծ գաղափարի,-
Որ սահման չունի քո սիրոյ մասն.
Փշրեցի պատնէշ, եկայ քեզ այցի...

Որքա՞ն ցաւ, կսկիծ՝ պանդխտութեան մէջ,
Ես դարձայ բոկոտ թափառաշրջիկ,
Քաղցած մնացի, բայց յոյսերով լի
Եկայ քեզ տեսնեմ, եկայ քեզ այցի...

-Որքա՞ն սպասեմ, որ դու հաստատես,
Որքա՞ն սպասեմ, որ վերափոխես.
Հեղձուցիչ օրը վաճես քո տնից
Կրկին գամ տեսնեմ նստել ես գահիդ...

Փանոս Վարդանեան
Թեհրան 2001 թ.

Մշակոյթ

Ուղղագրութեան ամենակարեւոր կանոնները

3.3 ձայնակապը

1. Հայերէն բոլոր բառերում, երբ կից ձայնատրոնների մէջ *յ* է լսւում, այդ *յ*-ն գրւում է միայն *ա* եւ *ն* ձայնատրոններից յետոյ. օրինակ՝ կախարան, հախճողութիւն, կախի, կաշուն, հախոց, գոխական, խոխեցի, կոշտիկ եւ այլն: Այս *յ*-ն կոչւում է ձայնակապ:

2. *Ոս, առ, ռու*, երկձայնատրոնները, որոնք արտասանւում են առանց *յ* եւ գրութեան մէջ *յ* չեն ունենում, պատահում են երտպական բառերում, օրինակ՝ *բռս, կակառ, կլլում* եւ այլն:

4. Օ եւ Ո

1. *Օ* լսելիս բառակգրին գրել *օ*, իսկ բառամիջում՝ *ո* եւ կարդալ *օ*. օրինակ՝ *օր, օգուտ, օրէնք* եւ այլն, բայց՝ *բռնք, կարտո, գինւոր* եւ այլն: *Ո*լ եւ *ռ*լքեր բառերը կազմւում են բացառութիւն:

2. *Վ* լսելիս բառակգրին գրել *ռ* եւ կարդալ *վ*. *Պի*-նակ՝ որոտ, որդի, որկոր, ոստ եւ այլն:

3. Օտարագոյի եւ ռուսերէն յատուկ անունները սկսել *վ* կապակցութեամբ. օրինակ՝ *Վորոշիլով, Վոլտեր, Վոլգա* եւ այլն:

4. Բարդութեան կամ ածանցման ժամանակ *օ* եւ *ռ* գրերով սկսող բառերի կամ արմատների ուղղագրութիւնը պահպանւում է նոյնութեամբ. օրինակ՝ *օդ-անօդ, օգուտ-անօգուտ, օրենք-անօրինութիւն, որոշ-անորոշ, որակ-վատորակ* եւ այլն:

5. Է եւ Ե

1. *Է* լսելիս բառակգրին գրել «*է*», իսկ բառամիջում *ե* եւ կարդալ *է*. օրինակ՝ *էլի, էութիւն, էգ, էպոխա* եւ այլն, բայց՝ *բերել օրենք, գեղեցիկ* եւ այլն:

2. *Ե* լսելիս բառակգրին գրել *ե* եւ կարդալ *յե*. օրինակ՝ *երես, երեկո, ես, եթե, երբ, ԵՖիմ* եւ այլն:

3. Բարդութեան կամ ածանցման ժամանակ *Ե* եւ *Է* գրերով սկսող բառերի ու արմատների ուղղագրութիւնը պահպանւում է նոյնութեամբ, օրինակ՝ *էական, անէական, անէանալ, եզր-անեզր-ծովեզր, երթ-չքերթ* եւ այլն:

6. Օժանդակ բայի ուղղագրութիւնը

1. Օժանդակ բայի ներկայի ձեւերն սկսւում են *ե*-ով. բացի եզակի երրորդ դէմքից, որ կը լինի *է*. Եմ, ես, է, ենք, եք, են:

2. Օժանդակ բայի անցեալի անկատար ձեւերը ենթարկւում են ընդունւած կանոնին, այսինքն՝ սկսւում են *է*-ով. էի, էիր, էր, էինք, էին:

3. Բարդութեան կամ ածանցման դէպքում օժանդակ բայերի ուղղագրութիւնը պահպանւում է նոյնութեամբ, օրինակ՝ *էի-չէի, էր-չէր, են-չեն, ես-չես, է-չէ*:

Ծանօթ.- Ըղծական եղանակի ժամանակների վերջաւորութիւնները դիտւում են իբրեւ բայական վերջաւորութիւն եւ գրւում բա-ռամիջի ե-ով:

Օրինակ՝ գրեմ, գրես, գրի եւ այլն. գրեի, գրեիր, գրեր եւ այլն:

7. Բաղաձայնների ուղղագրութիւնը

ա) *հ*

հ բաղաձայնը մի շարք բառերում *ը*-ից յետոյ չի արտասանւում կամ շատ թոյլ է արտասանւում:

գրւում է.	արտասանւում է.
աշխարհ	աշխար
խորհուրդ	խորուրդ
նիրհ	նիր
արհամարհել	արհամարել
ճանապարհ	ճանապար
խոնարհ	խոնար
շնորհք	շնորք
ժպիրհ	ժպիր

բ) *ջ* եւ *չ*

1. *Բ* բաղաձայնից յետոյ անհնչիւնափոխ բառարմատներում լսւում եւ գրւում է *չ*՝ դարչին, չարչի բառերում:

2. *Բ* բաղաձայնից յետոյ միւս բոլոր անհնչիւնափոխ բառարմատներում, եթէ լսւում է *չ*, գրւում է *ջ*. օրինակ՝

ստերջ (ամուլ, անպտուղ)	լուրջ
որջ (գազանի բոյն)	խարջ
անուրջ	շրջմովիկ
արջ	թրջել
արջառ	հորջորջել
արջասպ	մրջուն
բաղարջ	երջանիկ
շուրջ	վերջ

եւ այլն:

3. *Ղ* բաղաձայնից յետոյ լսւում եւ գրւում է *չ* միայն գեղջել բառի մէջ:

4. *Ղ* բաղաձայնից յետոյ, եթէ լսւում է *չ*, գրւում է *ջ* հնչիւնափոխութեան չեն ենթարկւած բոլոր բառարմատներում. օրինակ՝

աղջամուղջ	աղջիկ
այծեղջուր	առողջ
գաղջ	գեղջուկ
գղջալ	եղջերու
եղջուր	շեղջ
չղջիկ	ողջ
ողջույն	ողջախոհ

եւ այլն: ■

Շար. 2

Զանազան

Դիմում - ընդառաջում

«Լոյս» երկշաբաթերթի մեծարգոյ խմբագրապետ.

Այսու դիմում եմ Ձեզ, խնդրելով Ձեր լրագրում գետնել տալու համար ուղարկելով յայտարարութիւնը եւ դրանով իսկ ուժերի ներածին չափ օգնել մեր պարբերականի բաժանորդագրութեանը, որը կոչւած է նպաստելու լայն ճանաչում վայելող հայագիտական այս նշանաւոր հանդէսի հրատարակմանը:

Կանխաւ յայտնում եմ իմ շնորհակալութիւնը:
Ձերն ողջոյններով՝
Գլխաւոր խմբագիր Վարդգէս Միքայէլեան

Երեւան- 19, Բաղրամեան, 24
հեռ.581872, 565277

Յայտարարութիւն

Հայաստանի գիտութիւնների ազգային ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդէսը» արտերկրի համար սկսել է պարբերականի 2001թ. բաժանորդագրութիւնը:

Հանդէսում լայնօրէն լուսարանում եմ հայ ժողովրդի պատմութեան, գրականութեան, լեզուի, արւեստի, հնագիտութեան, ազգագրութեան, փիլիսոփայութեան եւ առհասարակ մշակոյթի հարցերը:

Պարբերականն ունի յօդածներ, հաղորդումներ, քննարկումներ եւ բանավէճեր, հրապարակումներ, քննադատութիւն եւ գրախօսութիւն, լրատու բաժինները: Յօդածները տպագրւում են հայերէն, մասամբ նաեւ ռուսերէն լեզուներով, անգլերէն ամփոփումներով հանդերձ:

Հանդէսը լոյս է տեսնում տարեկան 3 (երեք) համար պարբերականութեամբ, իւրաքանչիւրը 20 մամուլ՝ 320 մեծադիր էջ ծաւալով:

Երեք համարների տարեկան բաժանորդագինը՝ 100 ԱՄՆ դոլար (ներառեալ փոստային առաքման ծախսերը):

Հանդէսի գլխաւոր խմբագիրն է պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Վարդգէս Միքայէլեանը:

Բաժնեգումարը անհրաժեշտ է փոխանցել հետեւեալ հասցեով եւ բանկային համարով.

INTERMEDIARY BANK: CITIBANK, N. A.
NEW YORK, USA
SWIFT: CITIUS33
BENEFICIARY'S BANK: ACCOUNT 36017277
ARMENIAN DEVELOPMENT BANK
YEREVAN, ARMENIA
SWIFT: ARDEAM22
ACCOUNT: 1810001093533311

Ապրիլ 24

Որ Ապրիլեան օրերն են գալիս,
Յիշում եմ անմեղ, կոտորած հայեր:
Որ Ապրիլեան ցոյցերն են տեսնում,
Յիշում եմ հայոց զինուորներն անմեղ:
Որ տեսնում եմ, մահատակների նկարները բոլոր,
Յիշում եմ նրանց՝ քաջերին անմեղ:

Մենք միշտ կանգուն ենք, եւ պիտի մնանք:
Եւ ինչպէս՝ քաջ, կորիւն զինուորներն հայոց,
Մենք պիտի կուենք թշնամիների դէմ:

Մենք յետ պիտ վերցնենք մեր կանգուն սարերը:
Տեսաք չէ՞ թուրքերը Արցախում կուեցին, բայց
պարտւելով փախան:

Գիշտ է, որ քիչ ենք, բայց ձեռք-ձեռքի բռնած,
Հանրահաւաք կազմած, մի բռունցք դարձած
Պիտի պաշտպանենք հայրենիք, կրօն, մայրենի լեզուն:

Անի եւ Սեւանա Խալոյեաններ
«Արաքս» դպրոց, Ա. ուղեցոյց (Թեհրան)

Ցաւակցութիւն

Ցաւօք տեղեկացանք, որ մեր թերթի աշխատակից Թամիկ Բեշիշեանը, առհաւտ կորցրել է իր մօրեղբայր՝

Գուրգէն Գաբրիլ- Մասիհիին

«Լոյս» երկշաբաթերթի խմբագրական կազմը եւ նրա արւեստի բաժինը իր ցաւակցութիւնն է յայտնում մասնատրապէս Գաբրիլ-Մասիհի եւ Բեշիշեան ընտանիքներին:

ՏԻՐԱՆԻՔ

«Լոյս» երկշաբաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- < Վաչիկ Նաւասարդեան
- < Ղահրաման Ռանջարեան
- < Սարգիս Դաւթեան
- < Գրիգոր Ալլահվերդեան
- < Սամուէլ Մարգարեան
- < Աշոտ Մարտիրոսեան
- < Էդարդ Դիւանեան
- < Սիմոն Օրուջեան
- < Հայկուշ Թիլիմեան (Շահբանդարեան)
- < Մարգար Մուրադեան
- < Սերոբ Մինասեան
- < Աննա Աւանեսեան
- < Յովհաննէս Աւագեան
- < Մարիամջան (Մերխաթուն) Մանսուրեան
- < Աշոտ Ազիզեան
- < Սիմաս Մաղաթեան
- < Լեւոն Մելքոնեան
- < ԺողէՖ Վայելեան
- < Աղաւնի Կարապետեան (Զոհրաբեան)

Մանկական

«24 Ապրիլ»-ը ոչ թե սգի օր է, այլ՝
զարթօնքի, վերածնունդի եւ գոյատեւման

Ապրիլ 24

Միքելի երեխաներ, արդեն տեղեակ էք, որ ամեն տարի ապրիլ ամսին յիշում ենք այդ պատմական քականդ՝ Ապրիլ 24-ը: Արդեօք մինչեւ օրս անտե՞ղ էք այդ մասին, որ ի՞նչու չենք մոռանում այդ օրը, ի՞նչու տարեցտարի արելի ոգետրած ենք յիշում, ի՞նչու է քայլարշաւ տեղի ունենում եւ հազարատը ինչուներ:



Մեր պարտականութիւնն է յիշել Ապրիլեան մահատակներին, չմոռանալ նրանց ազ-գային եւ հողային դատը, եւ ամենից կարեւորը ճանաչելով մեր ազգի պատմութիւնը, եւ նկատի ունենալով մեր պապերի կրած տանջանքները՝ լաւ սովորենք մեր ինքնա-տիպ եւ ոսկեղնիկ մայրենի լեզուն: Ծանօթանանք մեր մշակութային հարստութիւններին եւ կառչելով մեր հողին ու հայրենիքին մէկ ու կէս միլիոն զոհերի հոգուն խաղաղութիւն պարգեւենք:

Առաջադրանք՝

Գտիր Ապրիլ 24-ի առիթով կերտած յուշակոթողը եւ նկարիք բաց թողնած տեղում:



Խաչբառը լրացրու Մեծ Եղեռնից տուժած հայ ազգի մտատրականների անուններով:

Դ					Վ					
Գ					Ձ					
Ռ				Ս						
Ս										
Կ										

Հանելուկ

Քարի պէս է՝
Քար չի,

Արեւ տեսա՛ կը հալչի:

ճնստող

Շնորհաւոր Մայիս 1-ը՝ աշխատաւորների միջազգային օրը

Մայիս

Ծիւ ու ծաղկով է եկել,
Երգ ու կեանքով է եկել.
Գիւղ ու քաղաք, սար ու ձոր
Կանաչ- կարմիր է ներկել:

Մայիս, չքնաղ քո դէմքին
Ի՛նչ վառ ժպիտ է խաղում,
Ի՛նչ ուրախ է քո հոգին,
Դու ինչ լա՛ւ ես ծիծաղում:

Ուզում եմ ես սիրտս բաց,
Քո վառ տեսքով հիացած,
Ճշալ, կանաչել եւ երգել՝
Մայիս, բարով ես եկել...


Բարի Գալուստ թռչուններ

Բարի գալուստ,
Թռչուններ,
Բարեկաններ
Թեւատը,
Կրկին եկաք
Հողը մեր,
Երկրներից
Հեռատը...
Մեզ մօտ ամեն
Թուփ ու ծառ,
Հարազատ են
Ձեզ համար,
Չագուկներով
Ձեր սիրուն,
Ծլլացեք
Օրն ի բուն:



Խաղ

Շրջանակի մէջ վերցրու սնունդի օգտագործող առարկաները:



Կազմեց՝ Արմինե Բարումեան

Առողջապահական

Վերջին տեղեկություններ կրծքի քաղցկեղի կապակցութեամբ (Երկրորդ բաժին) (Շար. նախորդ համարից)

Harvard woman's health watch
Թարգմ. Լևոն Սիսյանյան



Լայն խոռոչատր ասեղով բիոպսիա-ով ստացում է 0.65 միլիմետր տրամագծով և 1.25 սանտիմետր երկարութեամբ գլանաձև հիսկէն. այս տեխնիկայով, որը նեծապէս փոխարինել է բարակ ասեղով բիոպսիային կարելի է նմոյշներ ստանալ կասկածելի այն հիսկէից, որը շօշափելի չէ ձեռքով և նշմարում է միայն մամոգրամում կամ գերձայնային մետոդների արդիւնքում: Թէ՛ բարակ և թէ՛ լայն խոռոչատր ասեղով կատարուած բիոպսիաների դէպքում, բժիշկը կարող է ասեղը մղել ճիշտ կէտ օգտուելով համակարգչից և գերձայնային ալիքներից: Այս մետոդով կարելի է ստանալ 3-5 գլանաձև կտոր: Յաւելեալ նմոյշներ կարելի է քաղել այսպէս ասած, *ստերիո-տակտիկ* ասեղի բիոպսիայով, որում մամոգրամի և համակարգչի օգնութեամբ քարտէզագրում է ուռի ըստոյգ վայրը: Լայն խոռոչատր ասեղով բիոպսիաների 5%-10%-ը վճռական արդիւնք չեն տալիս, ինչն անհրաժեշտ է դարձնում ամբողջ կոշտութիւնը և յարակից նորմալ հիսկէից մի փոքր մաս վիրահատական բիոպսիայի միջոցով մարմնից հեռացնել:

Վերոնշեալ երկու կարգի գործողութիւններն էլ կարելի է գլուխ բերել մէկ ժամից աւելի կարճ ժամանակահատուածում:

Վիրահատական բիոպսիայի ենթարկուած կանանց 75%-80%-ի մօտ ուռը լինում է լատրակ (ոչ-քաղցկեղային): Մնացեալ 20%-25%-ի մօտ, որ քաղցկեղ է յայտնաբերում, կարիք է զգացում մի երկրորդ և հիմնական վիրահատման, քաղցկեղային հիսկէն ամբողջութեամբ հատելու միտումով:

Ինչ է մեզ յուշում բիոպսիան- Բիոպսիան հաստատում կամ բացառում է քաղցկեղի առկայութիւնը: Եթէ առկայ է քաղցկեղ, բիոպսիան կարող է յուշել դրա հնարատր ապագայ ընթացքի մասին: Ախտաբան բժիշկը-*պաթոլոգ*-ը կը զննի հիսկէի բնկորից պատրաստուած մանրադիտակային հատուածը (tissue section) և կը նկարագրի քաղցկեղի բնորոշ յատկանիշները իր գրատր զեկոյցում: Այդ զեկոյցը ճակատագրական արժէք ունի բուժման ընթացքի մէջ:

Ո՞ր տեսակի է քաղցկեղը- Պաթոլոգը կասի թէ քաղցկեղը in-situ է՞, թէ գրոհող և տարածող տեսակի և ո՞րն է նրա տիպը: Պաթոլոգի զեկոյցը մեզ ցատ կը տայ *ուռի չափը* (tumour size), որն միշտ չէ, որ ուղղակի յարաբերում է քաղցկեղի գրոհողականութեան հետ: Գրոհելու և տարածելու աստիճանը գնահատում է 1-ից մինչեւ 3 աստիճան ունեցող սանդղակի համաձայն ըստ քաղցկեղային բջիջների աճման դաջի (pattern of growth): Որքան բարձր լինի աստիճանը նոյնքան աւելի գրոհող բնոյթ ունի քաղցկեղը: Մակայն, նկատի պիտի ունենալ, որ բարձր աստիճանի քաղցկեղը յաճախ առաւել յաջող է պատասխանում քեմոտրապիայի և շոդարկումների միջոցով կատարուած բուժման ձեւերին:

Քաղցկեղի այլ առանձնատեսակներ- Բիոպսիայի միջոցով ստացուած հիսկէի նմոյշի ստուգմամբ կարելի

է գաղափար կազմել ուռի *էստրոգէն* (ER) և *պրօգեստարոն* (PR) կանացի հորմոնների քանակութեան մասին: Եթէ հիսկէի բջիջներում կան ER-ի կամ PR-ի ընդունիչներ (receptors), դա *նպաստատր ազդակ* է ուռի աճման համար և նշանակում է, թէ ուռը հակամէտ է աճ արձանագրել այդ հորմոնների ազդեցութեան տակ և ընդհակառակն՝ աւելի դրական պատասխանել հակա-էստրոգէն քաղադրոքիներին (օր. tamoxifen): Ախտաբան մասնագէտը նաեւ ստուգում է թէ քաղցկեղը արդեօք ներխուժե՞լ է աւիշի (lymph) և արեան երակների համակարգ, ինչը նշանակում է, որ քաղցկեղը տարածել է կրծքագեղձից դուրս այլ կէտեր: Մէկ այլ տեղեկութիւն, որը մեզ տալիս է բիոպսիան, դա *HER-2/neu* գենի վիճակն է: Այն ուռերը, որոնք ցոյց են տալիս *HER-2/neu* գենի ակտիւութեան նշաններ առաւել յախտոն և արագ են տարածուում, բայց նաեւ առաւել դրական են պատասխան տալիս *Herceptin*-ով արուած բուժմանը:

Ուռի եզրագծեր- Եթէ բիոպսիայով դուրս է բերել ուռը ամբողջութեամբ, այդ կարող է հաստատել պաթոլոգը տեսնելով ուռի առողջ (ոչ-քաղցկեղային) սահմանագիծը: Իսկ եթէ յստակ ստուգումներով պարզի, որ եզրերը առողջ և նորմալ չեն, ապա անհրաժեշտ է դառնում յաւելեալ վիրահատութիւն:

Բուժման ընթացքը- Կրծքի քաղցկեղի բուժումը սկըսում է ուռի վայրում (Locally) կատարուած վիրահատումով- որին երբեմն յաջորդում է շոդարկումը (Radiation therapy)- հեռացնելու համար քաղցկեղային բջիջները ստիճիքից և դրա անմիջական հարեւանութիւնից: Քաղցկեղի տարածուած դէպքերում պիտի նմոյշներ վերցնել ըստիճիքի կից աւշային հանգոյցներից (lymph nodes) ստուգելու թէ արդեօք կա՞ն քաղցկեղային բջիջներ այդ հանգոյցներում: Յետոյ որոշակի այլ քննարկումներով կատարում է քաղցկեղի սանդղակային գնահատումը, որով ճշտորոշում է, թէ արդեօք պէ՞տք է դիմել *սիստեմիկ* (մարմնի ողջ համակարգը ընդգրկող) բուժման միջոցների, ինչպէս օրինակ քեմոտրապիայի, հորմոնների կամ վարակագեղձական (immunotherapy) միջոցների, որպէսզի ոչնչացնեն մարմնի այլ կէտերում հաւանաբար ցրած քաղցկեղային բջիջները: Վիրահատմանը յաջորդող կարգի բուժում կոչւում է *օժանդակ* բուժում, իսկ վիրահատումից առաջ կատարածը՝ *նախաօժանդակ*:

Կրծքագեղձի քաղցկեղի պատրոշումն, ենթակայի կէտնքում մի հսկայական զգացական վայրիվայրում է պատճառում նրան, մասնաւոր, որ հիւանդը կանգնում է որոշումներ առնելու շէմին: Բայց նա չպիտի կարծի, թէ հէնց մի օրում պիտի որոշում տայ իր բուժման տարբերակների մասին: Շատ յաճախ կարելի է մի քանի շաբաթով հետաձգել որոշումը, որը ժամանակ կը տայ հիւանդին ծանօթանալու հիւանդութեանը և բուժման հնարատր եղանակներին և դիմելու մի երկրորդ մասնագէտի կամ կրծքաբանութեան կենտրոնի կարծիք ստանալու:

Հիւանդը բուժման ընթացքում ուղարկում է մէկ կամ աւելի մասնագէտների խորհրդակցութիւնն ունենալու. այդ մասնագէտների դասին կարելի է նշել հետեւեալները՝ վիրահատ ուռուցքաբան (oncologist), շոդաբան ուռուցքաբան, ներքին ուռուցքաբան, որոնցից իւրաքանչիւրը ըզբաղում է սիստեմային բուժմամբ- ու նաեւ պլաստիկ վիրահատման մասնագէտ:

Այդ ընթացքում, հիւանդը կը կանգնի կարեւոր որոշումներ առնելու անհրաժեշտութեան դիմաց: Որպէսզի

Առողջապահական

նա կարողանայ որոշում կայացնել, կարիք կունենայ դիմել իր բժշկին հետևելու հարցումներով: Բիոպսիայի ո՞ր տեսակը յարմարագույնն է իմ պարագային: Թիկնածու ե՞մ արդեօք խոռոչաուր ասեղով բիոպսիայի եթե ոչ, ապա ի՞նչու: Ինձ պիտի՞ դնեմ կրծքաբան մասնագետի խորհրդի տակ: Կա՞յ արդեօք պահակ հանգոյցի բիոպսիայի (տես վարը) տեխնիկ յարմարութիւն: Եթէ կայ, խորհրդատրելի՞ է ինձ: Բուժման ի՞նչպիսի այլընտրանք ունեմ, եթէ դրական լինեն քննութիւններիս արդիւնքը:

Խիստ օգտակար է խորհրդակցել ընտանիքի մէկ կամ ատելի անդամի կամ մի ընկերոջ հետ, որը կարող կը լինի ուղեկցել հիւանդին ժամադրութիւնների պահին ու նաեւ նոտագրութիւններ առնել նրա փոխարէն: Մի գոյգ յաւելեալ ականջը անգնահատելի օգնութիւն կը լինի ի մի բերելու այն բոլոր տեղեկութիւնները, որոնք կը տրուեն հիւանդին:

Վիրահատումով բուժում- Տեղական բնոյթի (local) վիրահատումը ընդգրկում է ստինքի ամբողջական վիրահատում (mastectomy) կամ էլ ստինքի մասնակի վիրահատում, որում չի անջատում ստինքը ամբողջութեամբ, այլ հատում է միայն խոցած մասը եւ յարակից առողջ հիւսկէից մի մաս, որից յետոյ հիւանդը ենթարկւում է շոդարկային բուժումների, որպէս լրացուցիչ քայլի:

Ստինքը պահպանող վիրահատում- Վիրահատ բրժիշկներն ունեն յատուկ տեքնիկներ վիրահատման գանգան ձեւերի համար. օրինակ՝ կոշտութեան հատում (lumpectomy), մասնակի ստինքահատում (partial mastectomy), քառորդմասի հատում (quadrantectomy), հատաւծահատում (segment excision) եւ տարածուն հատում (wide excision) նկարագրելու ստինքը պահպանելու նպատակով կատարւած հատումները: Բոլոր պարագաներում վիրահատը աշխատում է տալ այնպիսի կտրուածքներ, որ հնարաւորին չափ անաղարտ մնայ կրծքի արտաքին տեսքը եւ փոքր լինի գոյացած սպին: Անոտի (թեւատակ) գեղձեր եթէ կան, դրանք անջատում են ստուգման համար մի առանձին կտրուածքով:

Ստինքի ամբողջական հատում- Տարածուն քաղցկեղի դէպքում անջատում է ստինքը ամբողջութեամբ, որ սովորաբար կատարում է ձաձեւ կտրուածք տալով, ներառելով ստինքապատուկը եւ նախապէս կատարւած բիոպսիայի թողած սպին. ապա մնացեալ մաշկի տակ տունելանման մի ուղի բանալով դուրս է բերում կրծքագեղձը եւ աւշահանգոյցները: Եթէ կրծքը վերակառուցելու միտում կայ, ապա վիրաբուժական թիմի մէջ ներառում է պլաստիկ վիրահատման մասնագետ: Աւշահանգոյցները չեն անջատում եթէ քաղցկեղը *ductal carcinoma in situ (DCIS)* տեսակի է (տես Ա. բաժին):

Արմատական ստինքահատում (Redical mastectomy)- Այս վիրահատումը, որով անջատում է ստինքն ամբողջութեամբ, ինչպէս նաեւ կրծքավանդակի ողջ մկանները եւ անոտի բոլոր աւշահանգոյցները, հազաւէտօրէն է կատարում այսօր, որովհետեւ չունի կեանքի տեսողութիւնը երկարաձգող որեւէ առաւելութիւն նախորդ տեսակի վիրահատման համեմատութեամբ:

Պարզ կամ լրի ստինքահատում (Simple or total mastectomy)- Այս գործողութեամբ հեռացում է ամբողջ ըստինքը, բայց ոչ անոտի աւշահանգոյցները: Այս ձեւը սովորաբար կիրառում է այն կանանց պարագայում, որոնց քաղցկեղը DCIS տեսակի է կամ այն կանանց, որոնք

կանգնած են կրծքագեղձի քաղցկեղի բարձր ռիսկի առջեւ:

Կայ մի նոր գործընթաց՝ skin-sparing mastectomy անունով, որով ջանում են հնարաւորին չափ անաղարտ պահել մաշկը: Դա կատարում է պտուկի շուրջ մի շրջանածու կտրուածք տալով պարպել ստինքի հիւսկէն եւ ըստինքի հիւսկէն փոխարինել փորից կամ կոնսակից առնուած ճարպային հիւսկէով:

Աւշահանգոյցների անջատում (Lymph node removal)- Գրոհող կամ տարածող քաղցկեղի դէպքում կիրառւած վիրահատման մաս է կազմում անոտի ճարպային հիւսկէում առկայ աւշահանգոյցների հատումն ու քննութեան ենթարկումը: Այս հանգոյցները թակարդի դեր են խաղում աւշահիւթի մէջ լողացող բջիջների համար եւ եթէ դրանց մէջ տեսնում են քաղցկեղային բջիջներ, ուրեմն քաղցկեղը հաւանաբար տարածել է մարմնի այլ մասեր, կամ այլ խօսքով տեղի է ունեցել *մետաստազիզ* - մի դրութիւն, որը նշանակալի անդրադարձ կունենայ յետ-վիրաբուժական ընթացքում կիրառելիք բուժման հնարաւոր միջոցների վրայ: Այս գործողութիւնը իր մէջ պարունակում է վարակ առաջացնելու, անոտի զգայազրկումի եւ թեւի ու ձեռքի ուռճացման որոշակի վտանգ, որն կարող է տեսական լինել կամ ժամանակաւոր:

Sentinel lymph node biopsy (պահակ աւշահանգոյցի բիոպսիա)- Սա մի նոր մտադր է, որը հիւանդին կարող է գերծ պահել վերոնշեալ բարդութիւններից: Վիրահատը աւշային համակարգի մէջ սրկում է կապոյտ գոյնի մի հեղուկ (ու թերեւս նաեւ քիչ քանակութեամբ ռադիօ-իզոտոպ նիւթ) որպէսզի քարտեզագրի աւշահանգոյցային ցանցը եւ ճշտորոշի առաջին կամ *պահակ կանգնած* հանգոյցը, որն աւիշը պարպում է խոցած ստինքի մօտակայքից: Նա վիրահատում է այդ հանգոյցը եւ ենթարկում մանրադիտակային քննութեան: Եթէ այդ հանգոյցը գերծ է քաղցկեղային բջիջներից, ուրեմն գերծ են նաեւ մնացեալ հանգոյցները եւ պէտք չէ որ վիրահատեն: Համեմայն դէպս պիտի շեշտել, որ այս գործողութիւնը իրաւասու է կատարել փորձառու մասնագետների մի այնպիսի թիւ միայն, որը հաստատագրւած լինի որպէս այդպիսին Ամերիկայի Վիրահատների Կոլէջի կողմից: ■

Նախքան համար 17-ի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ա	ս	տ	ա	ն	դ	ա	կ	ա	ն		ա	զ	ա	ի
2	դ	ե	կ	տ	ե	ժ	բ	ե	ր		ա	դ	ա	ն	ա
3	ա	ր	ա	ժ		բ	ի	ր		ա	ն	զ	ա	ր	
4	ժ	տ	ր	ա	կ	ա	զ	ո	ր	ժ		ժ		կ	կ
5				զ	ա	լ	ա	ն	ե	ր	ե	ա	ն		
6	ք	ա	ժ	ո	ց			ա	լ		տ	ա	կ	տ	
7	ու	ն	ա	յ	ն		ա	խ		ի	դ	ա		ա	ա
8	ն	ա		ն	ե	ն	զ	ե	լ		ա	ք	ե	լ	
9		ս	ա		լ		ե	ր	ա	ժ		ս	ր		դ
10	զ	ե	ր	ց		ա	ա			ք	ա		ա	ի	ա
11	ա	լ	ե	խ	ա	ժ	ն		ք	ա	ր	ա	խ	ո	տ
12	ս	ի	զ	ա	ն	ք		ս	ի	ր	ա	ն	ու	ն	
13			ու	խ	տ	ա	դ	ի	ր			ս	ն		ա
14	կ	ի	ն	ո		յ	ա	ր	ա	դ	ր	ա	կ	ա	ն
15	պ	լ	ի	տ	ա		խ	տ	խ	տ	ա	լ		ժ	ի

Էջեր մարզաձեւերի պատմութիւնից

Մարտուղեակում են «Հրացանակիրները»

Յովհաննես Սարտիրոսեան



Մուսերամարտը աշխարհի հնագոյն մարզաձեւերից մէկն է: Հրազէնի գիտից յետոյ մարտական թրերն ու սուսերները կորցրեցին իրենց նախկին նշանակութիւնը եւ աստիճանաբար վերածուեցին զուտ մարզական գոյքի՝ ժամանակակից ճկաստանի, բր-

քաստանի եւ թրաստանի: 1896 թականին Օլիմպոսի ստորոտում անցկացւած անդրանիկ օլիմպիադայում, միւս մարզաձեւերի հետ մըրցաւէճի դուրս եկաւ նաեւ սուսերամարտը: Այն ժամանակ լարած եւ անգիջում մենամարտերն աւարտուեցին Ֆրանսիացի ճկաստանակիր Գրաւեյտտիի եւ թրաստանակիր Գէորգիադիսի (Յունաստան) յաղթանակով:

Փարիզի օլիմպիական երկրորդ համաժողովում (1900 թական) ճկաստանին եւ թրաստանին միացաւ նաեւ երրորդ «եղբայրը»՝ թրաստանը, սրի առաջին ոսկէ դափնեկիրը հռչակուեց կուրացի Ֆոնստը:

Եւ այսպէս, վերջ տրուեց ասպետական դարաշրջանին, մարտական թրաստանն ու ճկաստանը իրենց տեղերը գրաւեցին թանգարանների ցուցասրահներում, իսկ նըրանք, ովքեր ցանկանում էին մենամարտերում որոշել ամենամարտակիին եւ ամենախիզախին, դարձան երդեալ սուսերամարտիկ մարզիկներ:

Անցան տարիներ: «Հրացանակիրների» բանակը գընալով սուարացաւ եւ աւելի անգիջում ու լարած բնոյթ կրեց ուժեղագոյնի համար մղող պայքարը:

«Հրացանակիրների» հայրենիք հռչակուեց Ֆրանսիան, Հունգարիան եւ Իտալիան, որոնց մարզիկները բազմիցս հանդէս գալով աշխարհի առաջնութիւններում եւ օլիմպիական խաղերում, ոսկէ էջեր գրեցին համաշխարհային սպորտի պատմագրքում: Մակայն դա տեսեց մինչեւ 50-ական թականների կեսերը:

1952 թականին, Հելսինկիի 15-րդ օլիմպիական համաժողովում առաջին անգամ մարտուղեակ դուրս եկան նաեւ Խորհրդային Միութեան սուսերամարտիկները: Մակայն նրանց մուտքը մեծ մրցասպարէզ այդպէս էլ աննըկատ մնաց մարզասէրների եւ մասնագէտների համար: Չունենալով միջազգային խոշոր մրցաշարերի փորձ, ծանօթ չլինելով աշխարհի լաւագոյն դպրոցների վարպետութեանը, նրանք ուշի ուշով հետեւում էին արտասահմանեան լաւագոյն մարզիկների մարտերին, վերլուծում իւրաքանչիւր մարտ եւ հասունանում...:

Անցաւ եւս մի քանի տարի, մեծ մրցասպարէզների առաջին աշակերտները՝ Լեւ Սայչուկը, Իւան Մանենկոյն, Լեւ Կուզնեցովը, Գերման Բոկուրը եւ միւսները թէւ չհասան մարզական փառքի գագաթները, սակայն դարձան այն հիմնաքարը, որի վրայ բարձրացաւ հետագայի ԽՄ սուսերամարտի փառքի ոսկէ կամարը:

Մեծ մրցասպարէզների նորեկները շատ կարճ ժամանակամիջոցում սովորեցին յաղթելու այբուբենը, եւ արդէն սկսեց երերալ սուսերամարտի այնպիսի դպրոցների հեղինակութիւնը, ինչպիսիք էին Հունգարիան, Ֆրանսիան

եւ Իտալիան, որոնք կէս դար շարունակ իրար մէջ էին վիճարկել աշխարհի եւ օլիմպիական խաղերի յաղթողների տիտղոսները:

Այնուհետեւ, մարտուղեակներում իրենց գերազանց են դրսեւորել Խորհրդային Միութեան մարզիկները, որոնց անուններն վերածել են սուսերամարտի բարձրագոյն վարպետութեան խորհրդանիշի, իսկ իրենք, մարզիկները, յաւերժ գրանցում են ստացել Օլիմպոսի «անմահների» գրքում:

Բացի օլիմպիական աշխարհամարտերից, նրանք ոսկէ մեդալների նախանձելի հաւաքածու են ստեղծել նաեւ աշխարհի առաջնութիւնների պատմագրքում, իւրաքանչիւր էջում թողնելով անգիջում մարտերում ծնած յաղթանակի դափնիներ: Եւ այդպէս՝ աւելի քան 70 էջ, 70 ոսկէ ժայիտ:

Աշխարհի առաջնութիւններում եւ օլիմպիական խաղերում յատկապէս մեծ յաջողութեան են հասել Վ. Ժդանովիչը, որի կուրծքը զարդարում են օլիմպիական խաղերի երեք եւ աշխարհի առաջնութիւնների հինգ ոսկէ դափնի: Աշխարհի առաջնութիւնների վեց դափնի է զարդարում օլիմպիական խաղերի կրկնակի յաղթողներ Մարկ Միդլերի, Գերման Սեշնիկովի եւ Ի. Միսկինի կուրծքը:

Իրենց մարզական նւաճումներով տղամարդկանցից ետ չեն մնում նաեւ կանայք:

Մարզաշխարհին քաջ ծանօթ են աշխարհի եւ օլիմպիական խաղերի բազմակի չեմպիոններ Գալինա Գորոխովայի, Ալեքսանդրա Չաբելինայի, Վալենտինա Ռաստորոպայի, Տատեանա Սամուսենկոյի, Էմմա Եֆիմովայի, Ելենա Նովիկովայի (Բելովայի), Տատեանա Պետրենկոյի, Սետլանա Չիրիկովայի, Լիզմիլա Շիշովայի եւ շատ շատերի անունները:

Օլիմպիական խաղերում յատկապէս մեծ յաջողութեան է հասել Ելենա Նովիկովան (Բելովան), որը 1968 թականին առաջին անգամ հանդէս գալով Մեխիկոյում, խառնեց սուսերամարտի բոլոր գիտակների կանխագուշակութիւնները յաղթող ճանաչելով նաեւ անհատական մրցաշարում: Նրա կուրծքը զարդարում է օլիմպիական խաղերի երեք ոսկէ գափնի: Երեք ոսկէ դափնիների հասցէատէր են նաեւ Գալինա Գորոխովա, Ալեքսանդրա Չաբելինան:

Կարճ ժամանակ անց ԽՄ սուսերամարտիկները «սովորեցին» բարձրանալ պատույ պատւանդանին: Այդ սուղ ժամանակամիջոցում «հրացանակիրների» փայլուն համաստեղութիւն աճեցրին նշանաւոր մարզիկներ Իւրի Ղազանչեանը, Լեւ Սայչուկը եւ միւսները:

Սուսերամարտի պատմագրքում իր համեստ տեղն ունի նաեւ Հայաստանի հանրապետութեան ներկայացուցիչ Վալենտին Չերմիկով, որի հաւաքածուում կան աշխարհի եւ Մեքլուռնի օլիմպիական խաղերի թիմային առաջնութիւնների ոսկէ բրոնզէ մեդալներ, իսկ հետագայում միջազգային խոշոր մրցաշարերում յաջողութեամբ է հանդէս եկել պատանիների երկրի եւ աշխարհի անհատական առաջնութիւնների ոսկէ մեդալակիր Աշոտ Կարազեանը, որի կուրծքն են զարդարել նաեւ մեծահասակների աշխարհի թիմային առաջնութեան բրոնզէ եւ բազմաթիւ միջազգային մրցաշարերի յաղթողի ու մրցանակակիր յուշամեդալները:■

«Արագ, բարձր, ուժեղ» գրքից

Ժամանց

ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 18

Կազմեց՝
Կ. Տ. Յովհաննիսեան

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Հին Եգիպտոսում արեգակ պատկերող առասպելական կենդանու արձան- աջից՝ արշալուսին նախորդող մութը:
2. Ածական ճերմակատուն խիտ մազեր ունեցող գլխի համար- ասում են 2 այս հոգիանոց խաղը չենայիտն չունի:
3. Կրկնութիւնը՝ թանկագին անուն- Հայաստանում հրատարակող ամսագիր- երկնիչ կլոր թիւ:
4. Արական անուն- խայթող թռչող միջատ- կիսատ՝ մաս...
5. Մենակ բառի հետ շեշտում է մենակութիւնը- զարմացական բացականչութիւն- փոքրացման մասնիկ:
6. Բանջարանոցային պտուղ- երկրագործական աշխատանք:
7. Լեզուաբանութեան մէջ՝ շրջադարձութիւն (օտար)- մարմնի գոյգ մասերից- անուշահամ կորիզաւոր հատապտուղ:
8. Թերեւս անելի քիչ անելիք ունեն քան ձեռքի մատները- վայում է աներակներում- եպիսկոպոսական անուն:
9. Պարբերականի տեսակ:
10. Դեռ ձեռք չկալած- ժամանակահատուած:
11. Խանգարել, փչացնել- երկիր ԱՖրիկայում- դեռ լրի չի տաքացել...
12. Լցած արիւնով- աջից՝ ամենեւին, բոլորովին:
13. Արեւադարձային պտուղ- տունը բնակելի դարձնել:
14. Անճանկան դերանուն- լոյսի միատր- իգական անուն- լաւ է, որ դեռ ցուփ չի դարձել...
15. Ջրային տարածք- գիշատիչ թռչուն- ծայրը սուր փայտ- ցանկալի է, երբ բարձր չէ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1							■								
2										■					
3			■						■						
4						■		■					■		
5	■				■				■			■			■
6						■									■
7									■				■		
8							■			■					
9		■			■										■
10	■								■					■	
11									■				■		
12												■			
13							■								
14			■				■						■		
15				■					■				■		

ԼՈՒԾԵՔ
ԽԱՉԲԱՌԸ

ՍՏԱՅԵ
ՆԷՐ

ՈՒՂՂԱՐԱՅԵԱՑ

1. Եզր լծելու փայտ յարմարանք- հրէաների խոշորագոյն մասի պաշտամունքի առարկան- ճշմարտութիւնը չասել:
2. Պատառիկ հին բնագրից կամ որեւէ արեւստի առարկայից- տան մէջ եղած կայքը:
3. Սկիզբը անյայտ գիծ...- փչացածութիւն, աղտոտութիւն:
4. Հին տաք զէնք- օժանդակ բայ- հնում գործածուող իգական անուն:
5. Քիթը կտրւած- այնտեղ ուր շարուն են տատերը տպագրելու համար:
6. Բնական բարձրութիւն- աշխատելով ձեռք բերել- կենտ:
7. Շատ ընտիր մորթի, որ ձեռք է բերում Միջին Ասիայի երկրներից- փաղաքշական գառակ:
8. Մածնաջութ- հնութիւնների մասին գրող անձ- գիտական աշխատանք:
9. Տարածան- պարզ թիւ- յանապագօրեայ կեր:
10. Այստեղ հակառակ դրած բռնող գործիք- հայկական գետերից:
11. Իգական օտար անուն- լաքը մաքրող հեղուկ (օտար)- դարը, որ գալիս է ցածից:
12. Երեխայ ժամանակահից- ուռուցիկ, ծայր ունեցող:
13. Ցածից հողված ցուցական դերանուն- գիշերային հաճոյքի վայր- մակերեսի միատր:
14. Փոխարեքական իմաստով՝ յիմար, ապուշ- գիշերը Անգլիայում...- տան անդամներից մէկը:
15. Երգչական երկիր, որ այստեղ երեսում է հարաւից...- յագեցած- փոխարեքական իմաստով տափակ, կրկնած խօսք, նաեւ օրինակ:

Խաչբառ համար 17-ի
լուծւած տարբերակը
տեսնել՝ էջ 19-ում:

Գլոբուսի մասին

Կամսար Աւետիսեան

Աշխարհագրութեան դասին քարտեզի հետ դասարան է բերում նաեւ գլոբուս, որը մարդու կողմից ստեղծւած երկրի մօտաւոր նմանութիւնն է: Դա ամբողջ երկրի պատկերն է այնպիսի մեծութեամբ կամ մասշտաբով, որ մարդ կարող է տեսնել, ձեռք տալ եւ ընկալել միանգամից:



Պատկերաւոր ասած գլոբուսը կարծես մի տեսակ «դասարան բերած աշխարհ է»:

«Գլոբուսը» լատիներէն բառ է, որը նշանակում է «գունդ»: Իրականում նա փոքրացրած երկրագունդն է, ինչպէս ասում են մոդերը: Ովկիանոսների եւ ցամաքների գծագրութիւնը, ինչպէս նաեւ նրանց իւրաքանչիւրի դիրքը իրար նկատմամբ ամենից ճիշտ տալիս է գլոբուսը: Այսպիսով, գլոբուսը լինելով երկրի փոքրիկ պատճենը, շատ բան է պատմում նրա բնագրի մասին: Դուք նրա վերայ տեսնում էք ծովերը եւ ովկիանոսները կապոյտ գոյնով պատկերւած, բարձրութիւններն ու լեռները՝ դեղին եւ շագանակագոյն:

Գլոբուսի վրայ տրուում են միջօրեականներն ու գուգահեռականները: Գլոբուսի միջով անցնում է մի ձող, որը նրա երեւակայական առանցքն է համարում, իսկ նրա ծայրակէտերն էլ համարում են որպէս բևեռներ: Առասել գործածական են 1:30 եւ 1:80 միլիոնանոց մասշտաբի գլոբուսները: Դա նշանակում է, թէ քանի անգամ է գլոբուսի շառավիղը փոքր երկրի շառավիղից: Ասենք մեր բերած մասշտաբներից առաջինի դէպքում երեսուն միլիոն անգամ գլոբուսի շառավիղը փոքր է երկրի շառավիղից:

Գլոբուսի վրայ տրուում են աշխարհամասեր, ովկիանոսներ, ծովեր, գետեր, լեռներ, քաղաքներ եւ շատ ու շատ աշխարհագրական այլ անուններ:

Գլոբուսը աշխարհագրութեան դասին որոշ դէպքերում անփոխարինելի է: Օրինակ, երկրի՝ իր առանցքի շուրջ պտտւելը (գիշերայ եւ ցերեկայ առաջացումը), տարւայ եղանակների առաջացումը բացատրելու, ինչպէս նաեւ բևեռներ եւ հասարակածը ցոյց տալու համար:

Բայց դրանից, ոչ մի քարտեզ կամ գիրք չի կարող փոխարինել գլոբուսին նաեւ մի շարք այլ հարցեր աւելի ակնառու բացատրելու համար: Օրինակ՝ մեզ յայտնի է, որ 1937 թականի յունիսի 18-ին Մոսկւայից, առաջինը, բևեռի վրայով դէպի Վանկուվեր (Ամերիկայի Միացեալ Նահանգներ) թռու տվետական նշանաւոր օդաչու Վալերի Զկալովը: Պարզ է, որ այդ մարշրուտն աւելի ակնառու կերպով գլոբուսի վրայ կարելի է ցուցադրել:

Քանի որ հին յոյներին յայտնի էր երկրի գնդաձեւութեան փաստը, ապա նրանք էին, որ առաջին անգամ երկիրը պատկերացրին գլոբուսի ձեւով: Ամենահին գլոբուսը ենթադրում է, որ պատրաստել է Կրատոսը, մեր թագրութիւնից 150 տարի առաջ: Այդ ժամանակահից սկսած հարիւրաւոր մարդիկ տարբեր մեծութեան ու տիպի գլոբուսներ են պատրաստել, որոնք երկրի վերաբերեալ, ամբողջութեամբ վերցրած, տարբեր չափերի պատկերացումներ կամ տեղեկութիւններ էին տալիս: Հին ժա-

մանակների բոլոր գլոբուսները, յատկապէս մինչեւ Աշխարհագրական Մեծ յայտնագործումների դարաշրջանը, այսինքն 15 եւ 16-րդ դարերի միջեւ ընկած ժամանակաշրջանը, պատրաստւած գլոբուսների վրայ տեղադրւած ցամաքներն ու ծովերը մեծ մասամբ զանազան ենթադրութիւնների պատկերումն էր: Օրինակ, Կրատոսի գլոբուսը ցոյց էր տալիս այն ժամանակայ յայտնի աշխարհը, որն ընկած էր՝ Միջերկրական ծովի ափերի երկարութեամբ եւ տարածում էր մինչեւ Հարաւային Ասիա: Նա ցոյց էր տալիս երեք աշխարհամասեր, որոնց գոյութիւնը բաւական մտահայեցական էր: Նրանք այդ արեւ էին պարզապէս գլոբուսը հաւասարակշռելու եւ նրան որոշ չափով համաչափութիւն տալու սկզբունքով:

Այս ենթադրութեան ամենահետաքրքիր կողմ այն է, որ որոշ իմաստով կանխագուշակւում էր ներկայ Ամերիկաների եւ Աւստրալիայի (աւելի ճիշտ հարաւային ցամաքի գոյութեան մասին):

Սակայն մեզ հասած առաջին գլոբուսը, որը համարւում է գոյութիւն ունեցող գլոբուսներից ամենահինը, զրտնրում է Գերմանիայում՝ Նիւրնբերգ քաղաքի քանգարանում: Այն պատրաստել է Մարտին Բեհայնը 1492 թականին: Նա Ամերիկաների վերաբերեալ ոչ մի ենթադրութիւն չէր անում, բայց հետագայ տարիներում պատրաստւած գլոբուսները արդէն Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաների, Ատլանտեան եւ Խաղաղ ովկիանոսների ափերի որոշ հատածների գոնէ ընդհանուր ուրագիծը տալիս էին:

Այն ժամանակներից սկսած գլոբուսները քանի գնացին, այնքան կատարելագործւեցին. երկիրը պատկերւում էին այնպէս, ինչպէս մօտաւորապէս ներկայումս է: Միայն տասնութերորդ դարի կէսերին ենթադրութիւնները տեղի տւեցին ցամաքի եւ ջրի տեղաբաշխման հիմնաւորւած փաստերին:

Գլոբուսը ինքնին ուսումնական առարկայ է, որը կարելի է զանազան մպատակների համար օգտագործել: Ամենից տարածածը, այսպէս կոչւած, Ֆիզիկական գլոբուսն է, որը գոյների միջոցով ցոյց է տալիս ովկիանոսների փոփոխուող խորութիւնները եւ երկրի մակերեւոյթի տարբեր ձեւերը: Գլոբուսի վրայ ցոյց են տրւած նաեւ կլիմաների, բնական զոնաների, բուսականութեան, ովկիանոսային հոսանքների եւ այլնի տեղաբաշխումը:

Ի վերջոյ, գլոբուսը քարտեզ չէ բառի իսկական առումով: Նա, ինչպէս ասուց, երկրի մոդելն է: Այլ խօսքով, նա մեր մոլորակի միակ ճիշտ «պատկերն» է: Բայց տեխնիկական տեսակետից գլոբուսը մի շարք անյարմարութիւններ ունի, որոնք դժարացնում են նրա օգտագործումը: Այսպէս, օրինակ, եթէ մենք ուզենայինք աշխարհի կամ աշխարհամասերի քարտեզի վրայ եղած վայրերը տեսնել՝ նոյն մասշտաբով մի որեւիցէ գլոբուսի վրայ, ապա դա կը տասացւեր մի մեծ գունդ, որի օգտագործումը կապւած կը լինէր շատ դժարութիւնների հետ: Այս տեսակետից քարտեզը այն առատելութիւնն ունի, որ նա կարելի է սեղանի վրայ փռել, ծալել պատին կպցնել եւ ցանկացած տեղը տանել: Դրա համար դարձրական աշխարհագրութեան դասերը, յատկապէս բարձր դասարանների, աւելի շատ կապւած են քարտեզի հետ: Գլոբուսը բոլոր դէպքերում չի փոխարինում քարտեզին, այնպէս, ինչպէս որ քարտեզը չի փոխարինում գլոբուսին:■